



ԼԵՅՍ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԿԱՄԱՆԹԵՐԹ
ԳԱՆՏԱՆՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ



LUYS — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԼՈՅՍ ԱԾԽԱՐՀԻՆ

Զարեհ Արք. Ազնաուրեան

ՄԵԾ ԿԱԽԱՐԴԸ ՀՐԱԺԱՐԵՑԱԻ

Գրիգոր Ծ- վրդ. Չիֆթճեան

ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Արտակ Արք. Մանուկեան

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Խորէն Ա. քհնյ. Ներսէսեան

«ԱՄԷՆ» ԲԱՌԻՆ ԻՄԱՍՏԸ

Բաբգէն Թօփճեան

«ԵՐԹ» ՍՈՒՐԻԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ

Բ.Թ.

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ ԵՒ
ԱՆԹՈՆԻ ՔՐԱՖԴ-ՊՈՆԱՌ

Աբէլ քհնյ. Մանուկեան

ՈՐՈԳԻՆԷՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԵՒ
Ս. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՀԱՅ ՆԱՄԱԿԱԳԻՐԸ

Յակոբ Արք. Գլմճեան

ՄԱՅԵՍՏԵՐ ԷԿԷՍՐՏ

Յակոբ Արք. Գլմճեան

ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻՆ

«Դու՛մ է՛մ աշխարհի լոյսը»:
(Մտ 5. 14)

«Եկէ՛ք Տիրոջ լոյսովը փախնի՛ք»:
(Ես 2. 5)

«Դու՛մ է՛մ աշխարհի լոյսը»:

Ահա՛ քրիստոսական սահմանումը քրիստոնեային, իր հետեւորդներուն, եւ հետեւաբար՝ սահմանումը Եկեղեցիին, հարազատ ուղղութիւնը բոլոր անոնց որոնք իրենք զիրենք Քրիստոսի հետեւորդ կը դաւանին:

Աշխարհին լո՛յս է ամէն գործ՝ որ կուգայ Աստուծոյ անունով եւ Քրիստոսի Ս. Եկեղեցւոյ անհուն սիրով բացուելու մարդուն եւ մարդկային ընտանիքին, համեստ սահմաններով ու չափով Աստուծոյ լոյս ճշմարտութեան յայտնաբերող ճառագայթը բերելու ճշմարտութեան ծարաւի հոգիներուն, Աստուծոյ խօսքին կենարար հացին ոգեղէն սեղանը բանալու բոլոր այն միտքերուն առջեւ որոնք եթէ ճաշակած են Տիրոջ սեղանէն՝ գիտեն թէ քաղցր է անիկա. Աստուծոյ սիրոյն երկնահոս բալասանը հասցնելու այն բեկուած սիրտերուն, որոնք նեղութեանց հարուածէն խտտի պէս չորցած եւ աշխարհի ժխորին մէջ անապատացած են ու միայնացած՝ հաւալուանին պէս, աւերակներուն վրայ նստող բուին պէս կամ տանիքին նստած միայնակ ճնճողուկի մը պէս (հմտա Սղ 102.Ա-7). Աստուծոյ Հոգիին վերանորոգող զօրութեամբ վերստին ծնելու մեղքին մաշուծով հինցած մեր ներքին մարդերը, Քրիստոսով զանոնք Աստուծոյ ընծայելու համար որպէս նոր ստեղծուածներ. եւ, ի վերջոյ, կանգնելու եւ Աստուծոյ կեանքին հաղորդութեամբ կենսաւորելու համար գլորած եւ մահուան տիրապետութեան տակ բռնուած հոգիները, Աստուծոյ փառքին տեսիլքով ցօղելու համար եկեղեցին, որպէսզի բոլոր հոգիները անդադար օրհներգութեամբ Տիրոջ փառքը երգեն:

Ասիկա ճշմարիտ առաքելութիւնն է՝ Քրիստոսի կողմէ իր սուրբ եկեղեցիին վստահուած. եւ այդ առաքելութիւնը կը կոչուի աւետարանում:

Ինչպէս յստակօրէն կը հասկցուի, աւետարանումը կ'ընդգրկէ եկեղեցւոյ գործունէութեան բոլոր երեսները անխտիր: Եւ որովհետեւ եկեղեցին Քրիստոսի միացած եւ անոր առաջնորդութեան յանձնուած հաւատացեալներու մարմինն է, անոր գործունէութեան բոլոր երեսներն ալ յաւերժական ճառագայթումն են Քրիստոսի անձին ու գործին՝ աշխարհի կեանքին մէջ, մարդկութեան փրկութեան սահմանուած:

Այդ գործունէութեան մէջ կարելի է առանձնացնել աւետարանչութեան աւելի նեղ հասկացողութիւնը եղող՝ Աւետարանի քարոզութեան գործը, որ

ճամբայ կը բանայ գործունէական միւս երեսներուն առջեւ: Իսկ այդ գործը կը կոչուի նաեւ լուսաւորում, դարձեալ իբրեւ ճառագայթումը եւ յաւերժացումը Քրիստոսի անձին ու գործին, որ լոյսն էր աշխարհի (ՅՏ 8. 12), որ իբրեւ լոյս եկաւ աշխարհ՝ որպէսզի իրեն հաւատացողը խաւարին մէջ չմնայ (ՅՏ 12. 36), եւ հրաւիրեց մարդիկ որ հաւատան իրեն՝ Լոյսին, որպէսզի լոյսի որդիներ ըլլան (ՅՏ 12. 36): Եւ ո՛չ միայն ըլլան լոյսի որդիներ, այլեւ իրենց Փրկչին օրինակով ըլլան լոյս՝ աշխարհին (Մտ 5. 14):

Աշխարհին լոյս ըլլալու եւ մարդիկը Քրիստոսի խօսքով լուսաւորելու այդ առաքելութիւնը կ'իրագործուի երկու մակարդակներու վրայ: Առաջին՝ Եկեղեցիին միջոցաւ, զայն նկատի առած իբրեւ ամբողջութիւն եւ իբրեւ առաջնորդող ու վարդապետող մարմին, եւ երկրորդ՝ իւրաքանչիւր անհատ հաւատացեալի կողմէ, իբրեւ անհատանելի մէկ անդամը Քրիստոսի սուրբ Եկեղեցիին:

Արդ, ի՞նչպէս կը հասկնան ու կ'իրագործեն այդ առաքելութիւնը՝ Եկեղեցին եւ մեզմէ իւրաքանչիւրը:

Աստուծոյ աւետարանը քարոզելու պարտականութիւնը առաջնահերթ պարտաւորութիւնն է Եկեղեցիին:

Առաքելական քարոզութեան առաջին շրջանին, երբ Յիսուսի հետեւորդները շատցան եւ առաքեալները այլեւս ի վիճակի չէին եկեղեցւոյ բոլոր կարիքներուն հասնելու, կանչեցին բոլոր հաւատացեալները եւ ըսին. «Մենք չենք ուզեր Աստուծոյ խօսքին քարոզութիւնը ձգել եւ ուտելիք մատակարարելով զբաղիլ: Հետեւաբար, եղբայրներ, ձեր կողմէ վկայուած եօթը հոգիներ ընտրեցէք, որոնք սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ լեցուն ըլլան. զանոնք այս անհրաժեշտ գործին համար կարգենք, իսկ մենք աղօթքի եւ Աստուծոյ խօսքին մատակարարութեան նուիրուինք» (Գրծ 6. 1-4): Եւ այդպէս ալ եղաւ: Առաքեալներ միայն աղօթքի եւ Աստուծոյ խօսքին մատակարարման նուիրուեցան՝ աւետարանչութիւնը իրենց վրայ դրուած առաջնահերթ եւ անյետաձգելի «հարկ» համարելով, եւ աստուածային Լոյսին՝ Քրիստոսի կեանքին ու փրկարար շնորհքին կրակը իրենց ներսիդին վառած եւ իբրեւ Լոյսին առաքեալները՝ աշխարհին լոյս եղած, գացին իրենց վկայութեանց ճամբով Աստուծոյ գիտութիւնն ու սէրը ճառագայթելու աշխարհի մութ անկիւններուն:

Այդ նոյն ճառագայթող ջահը բարձր պահեց Եկեղեցին իր ընդհանրութեան մէջ, ինչպէս նաեւ բոլոր տեղական եկեղեցիները՝ որոնք առաքեալներու քարոզութեան գործին եւ առաքելական աւանդութեան կտակին ժառանգորդները եղան ամենուրեք: Առաքելական աւանդութեան ժառանգորդը եղան՝ ո՛չ թէ կրաւորական ձեւով, միայն ստացողի դերով ու հասկացողութեամբ, այլ մատակարար՝ զայն իբրեւ աստուածաւանդ քանքար իրենց հաւատքի կեանքին մէջ բազմարդիւն կերպով եւ առաւելագոյն չափով շահարկելէ ետք, եղան անոր կենդանի փոխանցողը եկեղեցւոյ նորածնունդ սերունդներուն:

Այդպիսին եղաւ Հայց. Առաքելական մեր Եկեղեցին, բոլոր միւս եկեղեցիներուն պէս եւ անոնց հետ: Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալներէն

ստացաւ Աստուծոյ խօսքին քրիստոսական ականգըր եւ զայն տէրունական սուրբ Խորհուրդէն՝ մեղսաքաւիչ ու կենարար Պատարագէն անբաժան պահեց, անով հայրենի մեր աշխարհին մէջ պատրաստելով քրիստոսական հաւատքի առաջին հունձքը եւ անկէ Աստուծոյ ընծայելով նահատակներու եւ հաւատարիմ վկաներու երախայրիք նախընծան: Անով էր որ, ըստ պատմիչին, Աստուծոյ խօսքին մատակարարման նուիրուած քարոզիչ վարդապետները ամպերու նմանութեամբ՝ գիշեր ցերեկ քարոզութեան յորդահեղեղ անձրեւը կը թափէին մեր ժողովուրդին վրայ (Փաւստոս Բիւզանդ, Գ. դար., գլ. ԺԳ): Անով էր որ հաւատքի լոյսը Հայաստանէն ճառագայթեց դէպի Աղուանք ու Վրաստան, եւ հեռահաս ճիգով բոցկլտաց՝ հասնելու համար հոններուն ու խաղարնեւրուն, մոնկոլին ու թաթարներուն: Անով էր որ լոյս-հաւատքը գիտակցական կեանքը եղաւ մեր հայրերուն, հոգիներուն հետ խառնուած ու զանգըռած՝ գո՛յնը եղաւ իրենց մորթին, էութի՛ւնը իրենց եսին, որուն իբրեւ պաշտպանութիւն եւ յարակալ արիւնագիր դաւանութիւն՝ սրտայօժար ընծայումով իրենց ամբողջ կեանքը տուին:

Այսօր եւս Եկեղեցին անցեալի ականգութեան ու ժառանգին կրաւորական ստացողը չէ պարզապէս: Եկեղեցին հաւատքին կանչուած եւ անոր շուրջ խմբուած եւ անով ապրող համայնքն է. բայց այդ հաւատքը միայն իր սրտին ու մտքին մէջ խոստովանող եւ զայն այնտեղ ծածոնկ պահող ու բանտող մարմինը չէ: Եկեղեցին նաեւ ակնկառոյց յոյսով փրկութեան միտող համայնքն է. բայց միայն ձեռնածալ կերպով սպասող հաւաքականութիւն չէ: Եկեղեցին կեանքով եւ մանաւանդ «առաւել կեանք»ով եռո՛ւն համայնք է, գործօ՛ն մարմին է, վկայո՛ղ հաւաքականութիւն է: Եւ մե՛նք ենք այդ եկեղեցին, Քրիստոսի բանաւոր մարմինը, Աստուծոյ փրկութեան յաւիտենական ծրագրին հաղորդ եւ աշխարհի վրայ անոր յառաջացման եւ իրագործման համար աշխատելու սահմանուած, ընտրուած անդամները: Այլ խօսքով՝ աստուածային գործին մարդկային ձեռքերը:

Սքանչելի կոչում մըն է ասիկա, որ իր հետ կը բերէ պարտք մը, հարկ մը՝ բոլորիս վրայ դրուած: Պետոս Առաքեալ հետեւեալ ձեւով կը սահմանէ այդ պարտքը. «Դուք ընտրուած սերունդ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սրբուած նոր ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը. եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց» (Ա. Պտ 2. 9): Ասիկա բնական արտայայտութիւնն է հաւատքին, հաւատացող սրտին. «Կը հաւատանք, եւ ատոր համար ալ կը խօսինք» (Բ. Կր 4. 13): Հաւատքը եթէ չխոստովանուի եւ կեանքով չարտայայտուի՝ հողէն դուրս մնացած ցորենահատիկին պէս կրնայ մնալ առանձին եւ անպտուղ: Մինչդեռ ճշմարիտ հաւատքը լոյս է, ճրագ է, զոր վառողը գրուանի տակ չի՛ դենբ, այլ զայն կը դնէ աշտանակին վրայ, որպէսզի լոյս տայ իր շրջապատին (տե՛ս Մտ 5. 15): Արդարեւ, հաւատքը կրնայ ճառագայթել մեր մէջ: Բայց ատիկա չի բաւեր. պէտք չէ զայն մեր մէջ ծածկենք ու բանտենք: Ընդհակառակը, հայելի մը պէս պէտք է արտացոլացնենք Աստուծոյ ինկած այդ շողը

եւ մեզմէ ճառագայթենք մեր շրջապատին:

Եկեղեցին, իբրեւ ընդհանրական եւ սուրբ մարմինը Քրիստոսի, կազմուած է մեզմով, այսինքն հաւատացեալ անդամներէ՝ որոնք իբրեւ «կենդանի քարեր» կը մտնեն եկեղեցւոյ հոգեւոր կառոյցին մէջ (Ա. Պտ 2. 5), անբաժանելի մասը կազմելով անոր: Բայց ճիշդ իբրեւ կենդանի՝ քարեր, անոնք աստուածային ճշմարտութեան դիմաց խուլ եւ այդ ճշմարտութիւնը լռեցնել փորձող աշխարհին դիմաց՝ պիտի ըլլան Քրիստոսի ճշմարտութիւնը բարձրաձայն աղաղակող եւ խոստովանող քարերը (Հմմտ Ղկ 19. 40), ատով իսկ ճշմարտութեան ճառագայթը ըլլալու համար աշխարհի մէջ, ըլլալու համար աշխարհի լոյսը, ինչպէս երկնառաք Վարդապետը պիտի սահմաններ գիրենք. «Դո՛ւք էք աշխարհի լոյսը» (Մտ 5. 14):

Աստուած այսքան պատիւ եւ վստահութիւն կապած է մեզի, իրեն հաւատացող իւրաքանչիւր մարդ անհատի: Մեզ բարձրացուցած է իր շնորհքներու աշտանակին վրայ՝ որպէսզի լոյս ըլլանք մեր շրջապատին:

Անշուշտ մենք լոյս չենք ինքնին, առանց Քրիստոսի: Բայց այն վայրկեանէն որ եկեղեցւոյ սուրբ աւագանէն ծնունդ կ'առնենք իբրեւ Քրիստոսի անդամ, այլ խօսքով՝ երբ հաւատքի ճամբով կը միանանք Քրիստոսի, անոր՝ որ Լոյսէն (Հօր Աստուծմէ) ծնած Լո՛յսն է, այդ պահէն սկսեալ մենք այլեւս լոյս ենք, լուսացած, իբրեւ Լոյս Աստուծոյ որդիները, եւ ուստի այլեւս պէտք է լոյսի որդիներու պէս քալենք, ինչպէս կ'ըսէ Առաքեալը (Եփ 5. 8: Հմմտ. Ա. Թս 5. 5):

Ի՞նչ է լոյսին դերը եւ ի՞նչպէս պէտք է քալեն լոյսի որդիները:

1. – Լոյսին դերը նախ գիտութիւն սփռել է: Լոյսը ճշմարտութեան ծանօթութիւնն է, որ մարդիկը դուրս կը բերէ իրենց հոգիի թափառումներէն ու մտքի խարխափումներէն եւ դէմ առ դէմ կը դնէ Աստուծոյ իրականութեան հետ, որ իրմով կը բացատրէ ու կ'իմաստաւորէ մարդկային գոյութիւնը: Այս լոյս-գիտութիւնը Քրիստոս է, որ, Յովհաննէս Աւետարանիչի բացատրութեամբ, այն «ճշմարիտ լոյսն է, որ աշխարհ պիտի գար եւ բոլոր մարդիկը լուսաւորէր» (ՅՏ. 1. 9): Այդ լոյս-գիտութիւնը միաժամանակ Աստուծոյ խօսքն է՝ իբր Աստուծոյ յայտնութիւն, Աստուծոյ իմաստութիւն, Աստուծոյ կամք եւ Աստուծոյ փրկութիւն՝ տրուած մարդոց: Իսկ այս բոլորը մարդիկ կը ստանան դարձեալ Քրիստոսով, որ Աստուծոյ խօսքն է (Բան) ե՛ւ յայտնութիւնը ե՛ւ իմաստութիւնը ե՛ւ կամքը եւ փրկութիւնը: Այդ խօսքը իբրեւ լոյս կը թափանցէ մեր ներքին աշխարհը եւ կը խուզարկէ ու լոյսին կը բերէ, կը յայտնէ ներքին մեր մարդը իր հարազատ պատկերին մէջ (տես Երբ 4. 12–13). եւ լոյսը կը յանդիմանէ մեր մէջ խաւարին գործերը եւ մեղքով փակուած մեր աչքերը բանալով՝ կը բերէ մեռելութենէն դուրս, կ'արթնցնէ մեզ մահուան քունէն, եւ Քրիստոսի լոյսով կը լուսաւորէ (Եփ 5. 13–14):

2. – Լոյսին դերը կեանք պարգեւել է: Աստուծոյ խօսքը իբրեւ լոյսի ճառագայթ մարդը Աստուծոյ դիմաց դնել է եւ զայն իր մեռելային քունէն արթնցնելով լուսաւորել է ետք՝ իրմով կը կենսաւորէ: Լոյսը կեանք է: Առանց

լոյսի չկա՛յ կեանք: Քրիստոս Աստուծոյ խօսքը իբրև լոյս սերմանեց բանա-
ւոր հոգիներու մէջ, եւ ըսաւ թէ իր խօսքը յաւիտենական կեանք է (ՅՃ 6. 64),
եւ ով որ իր մէջ կ'ունենայ Աստուծոյ խօսքերը՝ յաւիտենական կեանքը իր մէջ
կ'առնէ ու կը պահէ իր խօսքերը՝ յաւիտենական կեանքը իր մէջ կ'ունենայ:
Աստուծոյ խօսքը լոյսի սերմն է, ուրեմն, որ իր մէջ կեանքի գօրուծիւնը ունի,
ծննդեան կամ վերածննդեան ոյժը ունի, որով նորոգապէս կը ծնի մարդիկը Ա.
Հոգիի նորոգութեամբ, եւ ո՛չ թէ գիրին հնութեամբ (Հռ 7. 6), եւ որով կ'աճեց-
նէ ու պողպեքը կը դարձնէ մարդիկը՝ Աստուծոյ շնորհքին հաղորդ դարձնե-
լով (Կղ 1. 6) եւ յաւիտենական կեանքի հունձքը կուտայ իրմով սերմանուած
հոգիներուն (Հմմտ Գղ 6. 8):

3. - Լոյսին պաշտօնը ջերմացնել է: Լոյսը կեանք է՝ իր պարզեւած ջեր-
մութեամբ: Արդարեւ, ցրտութիւնը համազօր է մահուան. այնտեղ ամէն ինչ
կը սառի, ամէն ինչ կանգ կ'առնէ, կը դադրի: Մինչ ջերմութեան հետ սկիզբ
կ'առնէ շարժումը, աշխուժութիւնը, կեանքը: Նիւթական աշխարհին եւ նիւ-
թական մարմիններուն համար այս ճշմարտութիւնը ի գօրու է նաեւ հոգեկան
աշխարհին եւ հոգիներուն համար: Յրտացած հոգին մեռելութեան դիմող հո-
գին է, մինչ տաք հոգին կեանքով լեցուն եւ կեանքին դիմող հոգին է: Իսկ
հոգիին ջերմութիւնը չի՛ դար երեւելի արեգակէն, այլ Սիրո՛յ Արեգակէն՝ Աս-
տուծմէ, որուն սէրը մեր հոգիները ջերմացնող ճառագայթի պէս կը թափանցէ
մեր ներսիդին, որուն խօսքերը այրող կրակի պէս կը հրդեհեն մեր հոգիները եւ
մարդկային աշխարհը (տե՛ս Ղկ 24. 32 եւ 12. 49), որուն շնորհքները կրակէ
լեզուներու պէս կը բորբոքին մեր սրտերուն ու մտքին մէջ (Հմմտ Գրծ 2. 3),
մղելով մեզ՝ որ անդադար բերանով պատմենք սէրը, մեծութիւնը եւ սքանչելի
գործերը անոր՝ որ մեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց:

4. - Լոյսին պարտականութիւնը նաեւ ուրախացնել է: Լոյսը ուրախու-
թիւն է: Պայծառութիւնն է ան, յստակութիւնը, ուրկէ կասկածի ստուերները
կը փարատին, անորոշութեան շուքերը կը նահանջեն, հորիզոնները լոյս կը
հագնին եւ կարծէք կը սկսի մնայուն արշալոյս մը, ուր մարդուն սիրտը կը
լեցուի անհուն երանութեամբ եւ ուրախութեամբ: Այդ լոյսին ու պայծառու-
թեան ուրախութիւնն է որ Քրիստոսի Աւետարանը կը բերէ մարդոց: Ա՛յդ է
պատճառը որ Քրիստոսի փրկագործական պատմութեան կուտանք Աւետա-
րան անունը, որ կը նշանակէ աւետիսը (բարի եւ ուրախ լուրը) պարունակող
պատգամ կամ գիրք. իսկ աւետարանել կը նշանակէ աւետիս տալ , աւետել,
ուրախ լուրը փոխանցել:

Հետեւաբար, Քրիստոսը աւետարանել կամ Աւետարանը քարոզել՝ համա-
զօր կերպով կը նշանակեն Քրիստոսով եղած լուսաւորութեան ու փրկութեան
ուրախութիւնը քարոզել, փոխանցել եւ սփռել ամբողջ աշխարհին: Իսկ այս
իմաստով քարոզութիւնը, փոխանցումը կամ տարածումը միայն բերանացի
կամ գրաւոր եւ ի պաշտօնէ կատարուած քարոզութիւնը չեն հասկցուիր:

Իսկական աւետարանչութիւնը՝ առօրեայ մեր սովորական կեանքին ու
գործին ընդմէջէն մեր շրջապատին լոյս ըլլալն է՝ լոյսի որդիներու պէս քալե-

լով: Իսկ մենք լոյսի որդիներու պէս կը քալենք եւ մեր շուրջիններուն լոյս կ'ըլլանք՝

- Երբ Քրիստոսէ մեր ստացած հաւատքը կ'ապրինք անկեղծօրէն, ամբողջական վստահութեամբ Աստուծոյ վրայ,

- Երբ Քրիստոսի լոյսով մեր մէջէն կը վանենք մեղքի ապականութեան վարակը եւ մեռելութիւնը,

- Երբ վերանորոգուած ինքնութեամբ կ'ապրինք՝ յաւիտենական կեանքի ծիւր մեր հոգիներուն մէջ,

- Երբ այդ նոր կեանքը եւ անոր յոյսը մեր կեանքին մէջ կը թարգմանուին Աստուծոյ լոյսին ու սիրոյն ջերմութեամբը եւ ուրախութեամբը, եւ

- Երբ աստուածային լոյսէն մեր ստացած հաւատքի այդ լոյսն ու յոյսը կը փոխանցենք եւ անոր պարզեւած սիրով, ջերմութեամբ եւ ուրախութեամբ կ'օծենք ու կը քաղցրացնենք կեանքերը մարդոց:

Այն ատեն արդէն մեր կեանքերը ինքնի՛ն կը խօսին, առանց մեր շրթներու բացուելուն իսկ, եւ կ'աւետարանեն, կը պատմեն Աստուծոյ փրկութեան մեծագործ գօրութեան եւ Սուրբ Հոգիի ներկայութեան ու ճառագայթող շնորհներուն մասին:

Ով որ այսպիսի կեանք մը կ'ուզէ ապրել՝ մշտական հաղորդութեան մէջ պէտք է ըլլայ Աստուծոյ հետ, Աստուծոյ լոյսին հետ: Իսկ Աստուծոյ ներկայութիւնն ու լոյսը մենք առաւելագոյն չափով կ'ուենանք միայն այն աստուածակերտ սուրբ Տապանին մէջ որ Աստուծոյ փրկութեան լաստը՝ Եկեղեցին է, որ Աստուծոյ լոյսին դիմաց բռնուած պրիսմակն է՝ ուրկէ անցնող աստուածային ճառագայթը պէս-պէս շնորհքներով կ'անձրեւէ հաւատացեալ հոգիներուն վրայ, տալով անոնց ինչ որ անհրաժեշտ է իրենց փրկութեան եւ Աստուծոյ գործին յառաջդիմութեան համար:

Եկէ՛ք, ուրեմն, «Տիրոջ լոյսով քալենք»:

Որովհետեւ,

Ճիշդ է որ քաղցր է արձագանգ ըլլալ Աստուծոյ ձայնին, փողահարը ըլլալ իր կոչին, բարձրաբարբառ կանչը իր Խօսքին,

Բայց քաղցրագո՛յն է ճառագայթը ըլլալ իր լոյսին եւ անբիծ կեանքով ու գործով զայն շողարձակել հեռո՛ւ, հեռո՛ւ, մինչեւ ծագերն աշխարհի:

Զարեհ Արք. Ազնաւորեան

ՄԵԾ ԿԱԽԱՐԳԻ ԷՐԱԺԱՐԵՑԱԻ

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ, սուրբերու յիշատակութեան օրերուն մէջ կայ նաեւ նախկին կախարդ Կիպրիանոսի անուներ: Յատկապէս մեր ժամանակներուն, շնորհիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանին մէջ հրատարակուած «Կիպրիանոս» աղօթագրքին, այս անձին անունը բաւական լայն տարածում գտած է մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Փոքրիկ գրքոյկ մըն է «Կիպրիանոս»ը, որուն մէջ ամփոփուած զանազան տեսակի աղօթքներու զօրութեան յատուկ հաւատք կ'ընծայենք, մեր եկեղեցւոյ ճամբով, բարեպաշտական ոգին աճեցնելով մեր մէջ:

Սոյն գրքոյկին անունը ըլլալէ առաջ, սակայն, Կիպրիանոսը սուրբի մը անունն է, որ նախապէս կախարդութեամբ կը զբաղէր, դեւերու հետ բարեկամութիւնը ունենալով՝ անոնցմէ ոմանք մարդոց մէջ կը տեղադրէր, ուրիշները մէկ անձէն միւսը կը տեղափոխէր: Մէկ խօսքով, շահու աղբիւրը գտած էր ան, շուրջը գտնելով միամիտ ու տկար անհատականութեան տէր եղող մարդիկ:

Հետաքրքրական է Կիպրիանոսին կեանքը, որ աւանդապատումներով հասած է մեզի: Իր թակարդին մէջ ինկած բազմաթիւ տգէտներուն կեանքը դժոխքի վերածելէ ետք, օր մը կը բաղխի Քրիստոսի խաչին զօրութեան, որուն պատճառաւ ուշքը կը կորսնցնէ: Ինքն իրեն կը խորհի ըսելով.

- Եթէ խաչը այսքան զօրաւոր է, հապա խաչեա՞րը ինչքան զօրութիւն պէտք է ունենայ...:

Դարձի դալով, երբ Քրիստոսի խաչին զօրութիւնը տեսնելով, իր զօրութեան անզօրութիւնը փաստած էր արդէն, Կիպրիանոս կրօնաւորեցաւ վանք մը, իր հետ տանելով իր երկու էշերը: Սուրբերուն վարքը ներկայացնող աւանդապատում դրուագը կ'ըսէ, թէ վանահայրը օր մը կը նշմարէ, որ Կիպրիանոսի էշերը յաճախակիօրէն անոր ոտքերը կը լիզեն, կարծէք խնդրանք մը ունենային անկէ: Քանիցս նոյն երեւոյթին ականատես ըլլալով, վանահայրը իր մօտ կը կանչէ Կիպրիանոսը եւ կը հարցաքննէ այդ մասին: Կիպրիանոս նախ կը վարանի ճշմարտութիւնը ըսելէ, սակայն վանահօր պնդումներուն վրայ կը խոստովանի անցեալէն մնացած իրականութիւնը: Ան կ'ըսէ թէ այդ երկու էշերը այնպիսի մարդիկ եղած էին, որոնք շատ չարչարած ու յոգնեցուցած էին զինք: Ուստի կախարդանքով ու անէժներով զանոնք «կապած» էր՝ էշի արտաքին երեւոյթ տալով անոնց...: Վանահայրը լսելով ճշմարտութիւնը, կը հրահանգէ որ անմիջապէս «քակէ» զանոնք իրենց կապանքներէն, ու մարդկային կեանքին դարձնէ: Ան կը համոզէ Կիպրիանոսը ըսելով, որ ճշմարիտ քրիստոնէութիւնը նման զբաղումներէ ամբողջութեամբ հրաժարելով կարելի է ապրիլ, ու Աստուծոյ իսկական զաւակը դառնալու համար, ան բոլորովին պէտք է մոռնար ուրիշները «կապելու» իր նախկին յիմար չարութիւնները: Եւ Կիպրիանոս կ'ընդունի իր յանցանքը, ու սրտանց աղօթելով դարձեալ մարդու կը կերպարանափոխէ իր հետ բերած երկու էշերը, եւ խաղաղու-

թեամբ կը ճամբէ գանոնք իրենց տունները:

Աւանդապաշտական այս դրուագէն շատ բան կարելի է քաղել, բաղդատելով այնտեղ ըստածները, այսօրուան մեր ապրած կեանքի կարգ մը երեւոյթներուն հետ: Այսօր կը պակսի՞ն կախարդութեամբ, բժժանքով, նուսխայով, դիւահալածութեամբ կամ այլեւայլ սնամտութիւններով, իրենց եւ ուրիշներուն ժամանակը վատնողները: Եւ այս բոլորին տեսակաւոր կերպերը երբեմն ծիծաղելի ըլլալով, գարմանք կը պատճառեն գիտակից մարդոց, երբ կը տեսնեն անոնց հետեւորդները, որոնք կուրօրէն կը գործադրեն վճուկին կամ կախարդին յանձնարարութիւնները:

Չար ոգի մը բերելու կամ զայն հեռացնելու «վարպետները», նաեւ կարգ մը ֆէթիշներ կը գործածեն: Ֆէթիշը կրնայ առարկայ մը ըլլալ՝ ոսկորի կտոր մը, փայտէ, քարէ կամ մետաղէ տարօրինակ իր մը, այծի կոտող մը, կամ այլ առարկայ մը, որ դէպքի մը առիթով ձեռք անցուած ըլլայ: Այսպէս, կրօնքներու պատմութեան մէջ կ'ըսուի, որ Ափրիկեցի մը իր ֆէթիշը գտած է ամբողջութեամբ պատահաբար. տունէն դուրս գալու պահուն, կլոր ծովու քար մը ոտքին տակը գալով, գինք գետին կը փռէ: Սեւամորթը քարը վերցնելով, կը սկսի անոր հետ խօսիլ ըսելով.

- Դուն ուրեմն այստեղ ինձի կը սպասէի՛ր: Եւ քարը առաւ ու պահեց զգուշութեամբ իբրեւ իր ֆէթիշը: Այնուհետեւ, կեանքի դժուարութիւններուն մէջ միշտ այդ քարին կը դիմէր, յատկապէս ոգեհարցական խնդիրներու պարագային:

Վճուկներ եւ կախարդներ գանազան ֆէթիշներ կը գործածեն. կենդանիի լեզուց, կծու խոտ, մարդկային կմախքի կտոր մը, որոնք կը չորցնեն, կ'աղան, կը փոշիացնեն, իրարու կը խառնեն, յետոյ մոխիրով կը շաղեն, որոշ ժամանակ այդ խմորի գանգուածը բացօդեայ տեղ կը դնեն, որպէսզի ոգիներէն այցելուի: Ապա ատրիկա կը լեցնեն եղջիրի մը մէջ, բոյս մը կը խաշեն ու չար ոգի ունեցողին կը խմցնեն, եւ խմածին դառնութեան համար դժգոհող «հիւանդը» կը համոզեն, ըսելով թէ որքան լեզի ըլլայ ըմպելիքը, այնքան աւելի շուտ արդիւնք կուտայ՝ չար ոգին անմիջապէս հեռացնելով:

Տարբեր տեսակի ոգեհարցներ ու կախարդներ, իրենց շունչով ալ փորձած են «ոյժ» փոխանցել: Այսպէս նման հարցերով զբաղող Գրգըլպաչ կոչուած աղանդը Կիլիկիոյ մէջ, 20րդ դարու սկզբնաւորութեան, ունէր նահապետ մը, որ «Տէտէ» կը կոչուէր: Ան յատուկ շիշերու մէջ իր շունչը կը փչէր, եւ ապա շիշը փակելով կը զրկէր հեռու գաւառներու մէջ ապրող իր հետեւորդներուն: Անոնցմէ ամէնէն արժանաւորին վրայ կը բացուէր այդ շիշը, ու ան կը ստանար նոյն ոյժը զոր ունի Տէտէն ինք, հեռացնելու չար ոգիները...:

Տգիտութեան այս աստիճանը անշուշտ այնքան ալ զարմանալի պէտք չէ թուի, երբ տակաւին այսօր ալ նմանօրինակ երեւոյթներու կը հանդիպինք, եթէ ոչ շիշի մէջ փչելով, սակայն մարդոց դէմքին փչելով, ու անոնց ճակտին տրուած հարուածներով, որոնց հետեւանքով «զօրութիւն» ստացած անձը զգետնուի, կամաւոր կերպով կը նուազի եւ գինք շալկելու համար պատրաստ

կամաւոր անձներու թեւերուն մէջ կը հանդէս խաղաղութեամբ:

Կիպրիանոսի էջերը մարդ դարձան, դարձի եկած նախկին կախարդին աղօթքով: Ինչքա՛ն դեռ պէտք է աղօթել ուրեմն, որպէսզի մարդոց թիւը աճ արձանագրէ: Միւս կողմէ, պէտք է նաեւ ուշադիր ըլլալ, տեսնելու համար ոտքեր լիզող երկարականջ ծանօթ անասունները, անոնց բժշկութեան համար եւս միջնորդ ըլլալու, դրուագին մէջ ներկայացուած վանահօր նման:

Դիտէ՛ ապրած միջավայրդ, եւ վերոյիշեալ երեւոյթներուն պիտի հանդիպիս առատօրէն...: Մի՛ մոռնար որ մեծ կախարդը հրաժարեցաւ, անիմաստ գտնելով նախապէս իր բոլոր կատարածները:

Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթեան

ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Ճամբորդներ եմք նշմարտութեան.
Կը բարձրանանք լոյսի գամբով
Ու կը հայցենք՝ մեր մէջ ծաղկի
Քաղցրութիւնը երկինքներուն:

Անհարթ գամբով լոյս կը հայցենք
Իմանալի ակունքներէն.
Որ լուսաւոր գամբուն վրայ
Սեւ կէտերը լոյս ստանան:

Ու կը նայինքն լոյս աչքերով
Մեր էութեան աղքատութեան.
Մեր սպիտակ ափը պարզած՝
Կը բարձրանանք անծայր գամբով:

Ճամբորդներ եմք նշմարտութեան.
Մեր մարմինը դուրս թողած՝
Կը բարձրանանք անհուն գամբով,
Արեգակի գամբաներով:

ԱՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Սուրբ գրական հաստատահիմն վարդապետութիւնը սա է, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, այն մարմնով որ երկինք վերացաւ, աշխարհի վախճանին դարձեալ պիտի գայ միեւնոյն մարմնով, բոլոր դարերու մեռեալ ու ողջ էակները տիեզերական դատաստանի պիտի ենթարկէ եւ իւրաքանչիւրի գործին համեմատ պիտի տնօրինէ անոնց վարձքը կամ պատիժը:

Առաքեալներու վկայութեամբ. «Այս Յիսուսը որ երկինք համբարձաւ, որ մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս Անոր երկինք երթալը տեսաք» (Գործ. 1. 11.): «Իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցանելու համար» (Յայտ. 22. 12.): «Արդարեւ, Մարդու Որդին պիտի գայ իր Հօր փառքով, իր հրեշտակներուն հետ, եւ այն ատեն իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ» (Մատթ. 16. 27.):

Ուրեմն յստակ եւ որոշ է, որ Քրիստոսի Երկրորդ Գալուստէն առաջ ո՛չ դատ եւ ո՛չ ալ դատաստան պիտի կատարուի. հետեւաբար, անկէ առաջ ոչ ոք մտած կրնայ ըլլալ յաւիտենական երանութեան կամ յաւիտենական տանջանքի վայրերը: Այս պարագան հաստատելու համար կարգանք Նոր Կտակարանի հետեւեալ տողերը.

«Եւ երբ Մարդու Որդին իր փառքով գայ՝ բոլոր հրեշտակներուն հետ, պիտի նստի իր թագաւորական գահին վրայ: Բոլոր ազգերը պիտի հաւաքուին իր դիմաց եւ ինք մարդիկը իրարմէ պիտի գատէ, ինչպէս որ հովիւը ոչխարները այծերէն կը գատէ: Ոչխարները պիտի կանգնեցնէ իր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ կողմը: Յետոյ թագաւորը իր աջ կողմը կեցողներուն պիտի ըսէ. Եկէ՛ք Հօրս կողմէ օրհնեալներ, եւ ժառանգեցէ՛ք այն արքայութիւնը, որ ձեզի համար աշխարհի սկիզբէն պատրաստուած է...: Ապա իր ձախ կողմը կեցողներուն պիտի ըսէ. Անիծեալներ, հեռացէ՛ք ինձմէ, գացէ՛ք յաւիտենական կրակին մէջ, որ Սատանային եւ անոր հրեշտակներուն համար պատրաստուած է» (Մատթ. 25. 31-35, 41): «Որովհետեւ Աստուած մեղանչած հրեշտակներուն իսկ չխնայեց, այլ՝ գանոնք տարտարոս նետել տուաւ, ուր խաւարին կապանքներով կապուած՝ կը պահուին» (Բ. Պետ. 2. 4.):

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին չընդունիր ո՛չ առանձնական դատաստանի մտածումը, ո՛չ յաւիտենական դատաստանէն առաջ վարձքի ու հատուցման գաղափարը եւ ո՛չ ալ քաւարանի գոյութեան ըմբռնումը: Ս. Պատարագի սկիզբը, Ս. Սեղանին առջեւ երբ քահանան բազկատարած կ'աղօթէ եւ ի լուր ժողովրդեան կ'ըսէ. «Ի յարկի սրբութեան եւ ի տեղոջս փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ Ս. Նշանացս եւ Ս. Սեղանոյս, խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք», հոս յիշուած «քաւարան»ը, կը յատկանշէ եկեղեցւոյ այդ ներկայութիւնը, ուր մեղուցեալ հոգին խոստովանութեամբ եւ հաւատքով կ'արժանանայ Աստուծոյ քաւութեան շնորհքին:

Խորէն Ա. Քիւնյ. Ներսէսեան

«ԱՄԷՆ» ԲԱՌԻՆ ԻՄԱՍԵ

Նոր Կտակարանին մէջ զանազան ածականներ տրուած են Յիսուս Քրիստոսի, ինչպէս օրինակ, բարի հովիւը, աշխարհի լոյսը, Աստուծոյ ծառան, կեանքի հացը, դուռը, Տէրը եւայլն եւայլն. ասոնց կարգին նշուած կը գտնենք նաեւ Ամէն բառը:

Նաեւ, նկատելի է որ Տէրունական աղօթքը կ'աւարտի Ամէն բառի արտասանութեամբ: Եկեղեցական ծիսակատարութեանց ընթացքին կատարուած մաղթանքներն ու աղօթքները, նոյնպէս կ'աւարտին Ամէն բառով. հետեւաբար, հետաքրքրական է գիտնալ Ամէն բառին իմաստը ու անոր առընչութիւնը Յիսուսի անուան:

Ամէն բառը կապակցութիւն ունի եբրայերէնի «Աման» բային որ կը նշանակէ թող ըլլայ, հաստատել, ապացուցանել, փաստել: Հին Կտակարանին մէջ Ամէն բառը գործածուած է հաստատելու համար խօսքի մը կամ դէպքի մը ստոյգ ու ճշմարիտ ըլլալը:

Նէեմեայի գիրքին մէջ կը կարդանք որ երբ Եզրաս քահանան ժողովուրդին կը կարդայ Մովսէսի Օրինաց գիրքը, անոնք իրենց հաւանութիւնը կուտան Ամէն, Ամէն ըսելով (8. 1-8):

Դաւիթ թագաւոր կը փափաքի որ իր կենդանութեան Սողոմոն որդին մասնաւոր յարգանք վայելէ ու իր մահէն ետք՝ յաջորդէ իրեն. «Այն ատեն Յովիադայի որդին Բանեա թագաւորին պատասխան տուաւ ու ըսաւ, Ամէն» (Գ. Թագ. 1. 36). այսինքն, ան ընդունեց ու վաւերացուց Դաւիթի կամքն ու ծրագիրը:

Աստուած Երեմեա թագաւորին կը հրահանգէ ժողովուրդին յայտնելու, որ եթէ իր հետ խոստացած ուխտերն ին պահեն՝ պիտի օրհնուին, իսկ եթէ այդ անտեսեն ու չպահեն՝ պիտի անիծուին. «Եւ ես պատասխան տուի ու ըսի, Ամէն, ով Տէր» (11. 5): Ամէն ըսելով Երեմեա կը խոստանայ գործադրել իրեն հրահանգուած պատուէրը:

Քահանայի խնդրանք-աղօթքի վերջաւորութեան ժողովուրդը անոր կը ձայնակցի ու կը փառաբանէ զԱստուած գոչելով. «Օրհնեա՛լ է Տէրը, Աստուածը իր ժողովուրդին, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն, ըլլա՛յ» (Սղմ. 41 (40) 13, 106 (105) 48):

Նոր Կտակարանի Յովհաննէսի Յայտնութեան Գիրքին մէջ, հետեւեալ փառաբանութիւնը կը վերջանայ Ամէն յայտարարութեամբ, ապացուցանելու համար գովերգութեան անկեղծութիւնն ու իսկութիւնը. «Անիկա (Յիսուս) մեզ սիրեց ու իր արիւնով մեր մեղքերուն շղթաները փշոքեց, ու մեզ ըրաւ քահանաներու թագաւորութիւն մը, ծառայելու՝ իր հօր: Փառք ու զօրութիւն իրեն յաւիտեանս յաւիտենից. Ամէն» (1. 5-6):

Պողոս Առաքեալ Ամէն բառի գործածութեամբ իրողութեան մը ճշմարտութիւնը կը հաստատէ երբ կ'ըսէ. «Աստուծոյ բարկութիւնը երկինքէն պիտի

յայտնուի մարդոց անհավատութեան եւ անիրաւութեան համար...քանի որ Աստուծոյ վերաբերմամբ ճշմարտութեան փոխարէն ստուծիւնը նախընտրեցին, արարածներուն յարգանք ընծայեցին եւ զանոնք պաշտեցին, փոխանակ Արարիչը պաշտելու, որ օրհնեալ է յաւիտեան, Ամէն» (Հռոմ. 1. 18, 25):

Հէգեական սինակոկներու մէջ կիրարկուած Ամէն բառը որդեգրելով, նախնական քրիստոնեայ ղեկավարները զայն ներմուծեցին իրենց կրօնական արարողութեանց ու պաշտամունքին մէջ: Հովիւին կամ համայնքի երէցին գոհաբանական մաղթանքներէն ու խնդրանք-աղօթքներէ ետք, հաւատացեալներ Ամէն ըսելով իրենց հաւանութիւնը տուած կ'ըլլային կատարուած փառաբանութեանց:

Եսայի մարգարէն սահմանելու համար որ միայն Աստուած կրնայ ճշմարիտ ըլլալ, երկու անգամ «Ճշմարիտ Աստուած» արտայայտութիւնը ունեցած է (տե՛ս 65. 16). սակայն իր մարգարէութեան գիրքին երբայիտէն բնագրին մէջ «Ամէնի Աստուածը» արձանագրուած կը գտնենք:

Նոյն իմաստով Յովհաննէս Առաքեալ Լաւողիկիայի եկեղեցիին յղած նամակին մէջ կը գրէ. «Այսպէս կ'ըսէ Ամէնը, Հաւատարիմ եւ Ճշմարիտ Վկան, Աստուծոյ ստեղծագործութեան սկիզբը» (Յայտ. 3. 14): Յիսուսը Ամէն կոչելով, կը դաւանի որ Ան Ճշմարիտ Աստուած է:

Նագովրեցի վարդապետը իր քարոզութեան ընթացքին երբ կը գործածէր «Ամէն Ամէն կ'ըսեմ ձեզի» խօսքը, որ տառացիօրէն «Ճշմարիտ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի» իմաստը ունի, կը հաստատէր որ ոչ միայն ճշմարտութիւնը կը խօսէր, այլ ինքն էր բացարձակ ճշմարտութիւնը:

Արդարեւ, «Ամէն» մակդիրը որ տրուած է Յիսուսի, կը բացայայտէ դարերու ընդմէջէն Աստուծոյ կատարած խոստումներուն գործադրութեան ճշմարտութիւնը. ինչպէս Պօղոս Առաքեալ կը վկայէ. «Արդարեւ, Քրիստոս Աստուծոյ բոլոր խոստումներուն Այոն է» (Բ. Կորն. 1. 20): Այլ խօսքով, Հին Կտակարանին մէջ մարգարէներու բերնով մարդկութեան տրուած Աստուծոյ խոստումները իրականութիւն դարձան ու գործադրուեցան Յիսուս Քրիստոսի մարդեղութեամբ. հետեւաբար, Յիսուսի համար երբ Ամէն բառը գործածենք, կը դաւանենք որ Ան Աստուծոյ կատարած խոստումներուն վաւերական երաշխաւորն է:

Բաբգէն Թօփեան

«Երթ» Սուրբահայ Տարեգիրք

Թիւ 1, Հալէպ, 2005, էջ 246

Թիւ 2, Հալէպ, 2006, էջ 312

Բերիոյ Հայոց Թեմի հովանաւորութեամբ ու նախաձեռնութեամբ Սուրբահայ գրողներու համախմբումին, երկու տարիէ ի վեր լոյս կը տեսնէ «Երթ» գրական տարեգիրքը՝ ճոխ ու բովանդակալից գրութիւններով:

Բերիոյ Թեմի բարեջան առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահան Եպս. Սարգիսեան, «Նոր մարտահրաւէր...» ներմուծական բացատրականով, «Երթ»ի հրատարակութեան շարժառիթը կը լուսաբանէ ըսելով.

«Հայ ժողովուրդի մշակոյթին պատմական երթը իւրայատուկ արարումներու կամ ստեղծումներու փորձով հարուստ աւանդութիւններ ունի: Հայը աստուածատուր շնորհքով օժտուած ժողովուրդ մըն է, որ գիտէ եւ կրնայ աննպաստ կացութիւններու, վտանգաւոր դարադարձներու, անվերջանալի սպառնալիքներու եւ ցեղակործան ցեղասպանութիւններու փորձերուն դիմաց ո՛չ միայն անկոտորում հաւատքով ու կամքով տոկալ, այլեւ՝ ստեղծել գերագանցն ու հրաշալին...»:

Սուրբահայ գրողներու համախմբումը՝ ներշնչուած է Անթիլիասի մէջ գումարուած (մարտ 2004) Միջին Արեւելքի Հայ Գրողներու Առաջին հաւաքէն: Առաջնորդ չօր քաջալերանքով, Ազգային Առաջնորդարանին մէջ համախմբուած սուրբահայ կեանքին մէջ գործող մտաւորականներ ու գրողներ, անկախ իրենց գրական, գաղափարական կամ այլ տարբերութիւններէն, ամենամսեայ հերթական դրութեամբ, միասնաբար հանդիպումներու ճամբով, իրար աւելի լաւ ճանչնալու, իրարու հետ հայկական ազգային եւ մշակութային մտահոգութիւններն ու ձգտումները քննարկելու առաջագրութեամբ միջնորդութիւն մը եւ շարժում մը ստեղծեցին...»:

Յնձութեամբ կ'արձագանգենք Սուրբահայ Գրողներու համախմբումի պատուաբեր ու համարձակ նախաձեռնութեան, որ «Երթ» Տարեգիրքին ճամբով կուգայ իր հաւաքական ու միասնական խօսքը արտասանելու ժամանակակից հայ գրականութեան անդաստանին մէջ...»:

«Երթ» թիւ 1 Տարեգիրքը ձօնուած է Հայ գիրքու գիւտի 1600ամեակին եւ լոյս տեսած է Կարպիս եւ Սեղա Վարդանեան ամուլի մեկենասութեամբ: Ան կը բովանդակէ հետեւեալ բաժինները.

Արձակ եւ չափածոյ գրութիւններ (էջ 13-168), Հրապարակախօսութիւն-Թարգմանութիւն-Յուշագրութիւն (էջ 169-214) եւ Ուսումնասիրութիւն (էջ 215-243), իւրաքանչիւր գրութեան սկիզբը հակիրճ կերպով տրուած է հեղինակին կենսագրութիւնը եւ գրական վաստակը:

«Երթ» թիւ 2 Տարեգիրքը ձօնուած է Հայ Դպրոցին. անոր հրատարակութեան ծախսը հոգացած են Ժողէֆ եւ Էլի Սանոսեան եղբարք:

Սոյն հատորին մէջ ներկայացուած են.

Գեղարուեստական գրականութիւն (էջ 19-120), Ուսումնասիրութիւն եւ Արխիւային հրապարակում (էջ 121-256), Թարգմանական գրականութիւն (էջ 257-278), Ժամանակագրական (էջ 279-298), *իսկ յաւելուած բաժինով տրուած է Սուրբահայ գրողներու 2006ի գրական հունձքը, հանդիպումներն ու ձեռնարկները:*

Ձերմօրէն կը թելադրենք ընթեռնել «Երթ» Տարեգիրքի յիշեալ գոյգ թիւերը, քաջալերելու հեղինակներուն աշխատանքը եւ օգտուելու անոնց մտքի արգասիքներէն:

Բարգէն Թօփեան

Ստանալու համար դիմել՝

Armenian Prelacy
P.O. Box 133
ALEPPO, SYRIA



ԱՆԹՈՆԻ ՔՐԱՖՏԻ-ՊՈՆԱՌ

ԼԵՈՒ ԿԱՄՍԱՐ ԵՒ ԱՆԹՈՆԻ ՔՐԱՖՊ-ՊՈՆԱՌ

(Ընդվզում արդար զայրոյթի դէմ)

*«Առաքինութիւններէն երախտագիտութիւնը
ոչ միայն ամենամեծն է, այլ նաեւ մայրն է ամենուն»
(Կիկերոն)*

Սոյն գրութիւնը կը վերաբերի հայրենի «Ազգ» օրաթերթի Մշակոյթ յաւելուածով (թիւ 018, 25-11-2006) տպուած Լեո Կամսարի նամակին՝ ուղղուած Անթոնի Քրաֆ֊Պոնառի:

Ազգ օրաթերթի «Մշակոյթ» յաւելուածի թիւ 018-ին մէջ (25 նոյեմբեր 2006) տպուեցաւ Լեո Կամսարի ստորագրութեամբ եւ 1923-ին գրուած տարօրինակ նամակ մը՝ հայ ազգի մեծ բարեկամներէն Անթոնի Քրաֆ֊Պոնառի¹⁾ դէմ ուղղուած: Կասկածելի է, որ Պոնառ ստացած ըլլայ այդ նամակը. աւելի հաւանական է, որ ան պարզապէս հայ երգիծաբանի մտքի քմահաճութեան արգասիքն է: Մեզի համար յստակ չէ նաեւ այն, թէ ինչո՞ւ Ազգը իր Մշակոյթ յաւելուածին մէջ հրատարակած է այս խնդրահարոյց նամակը առանց որեւէ մեկնաբանութեան:

Թէեւ քիչ մը ուշ, բայց կը փորձենք մեկնաբանել այս նամակը:

Նախ՝ հակուած ենք ենթադրելու, որ խնդրոյ առարկայ նամակին մէջ տեղ դրած Լեո Կամսարի պոռթկումն ու ծայրայեղ կասկածամտութիւնը հետեւանքն են իր անձնական կեանքին եւ փորձառութեան: Ան ծնած է Վան 1888-ին եւ մասնակցած է 1915-ի Վանի հերոսամարտին: Ապրելով հայ ժողովուրդի ամենածանր ժամանակահատուածներէն մէկուն մէջ, ան արդարօրէն յոսսախաբուած է հայկական հարցին շուրջ հիւստուած միջազգային դիւանագիտութեան կամայականութիւններէն: Այս մեկնակէտէն առաջնորդուելով, թերեւս հասկնալի կ'ըլլար հեղինակի «արդար զայրոյթ»ը, եթէ ան ուղղուած ըլլար ճիշդ հասցէակիրին: Սակայն արդեօք Քրաֆ֊Պոնառ արժանի՞ էր կրե-

1 Զուիցերիացի փոփոխական Անտոնի Քրաֆ֊Պոնառ (1869-1945) Հայաստանի եւ հայութեան նուիրուած բազմաթիւ յօրուածներէ բացի ֆեդիմակն է նաեւ ֆետետալ մենագրութիւններուն. Antony KRAFFT-BONNARD, Sans foyers. Le cri de détresse de l'Arménie, Genève, 1921; Pour le droit de l'Arménie, Alençon, 1922; L'heure de l'Arménie, Genève, 1922; L'Arménie à la conférence de Lausanne, Alençon, 1923; L'exil arménien, Genève, 1926; Arménie, justice et réparation, Genève, 1930.

լու նամակին մէջ արտայայտուած մահացու ծաղրանքը, ծանր լուտանքներն ու անտեղի անպատուութիւնները:

Նամակի սկիզբէն իսկ, հեղինակը ինքզինքին իրաւունք կու տայ ըսելու իր անմեղ գոհին «Թոյլ տուէ՛ք քանի մը բառով անպատուեմ ձեզի», մէկուն, որ իր համակ կեանքը դարձուցած է նուիրում բազմաշարձար հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան ու աննահանջ ծառայութիւն ցեղասպանութիւնը վերապրող եւ որբութեան կրակէ շապիկը հագած հայորդիներուն:

Քաղաքակիրթ մարդու ամենամեծ իմաստութիւններէն մին է ճանչնալ իր բարեկամը եւ զայն տարբերել թշնամիէն: Թերեւս յանդգնութիւն համարուի մտածել, որ քաղաքական հասունութեան պակասն ու դիւանագիտութեան ասպարէզէն ներս խակութիւնն են, որոնք երբեմն ծնունդ տուած են այնպիսի մօտեցումներու եւ որոնք դժբախտաբար հայ ժողովուրդին համար երբեմն ունեցած են ճակատագրական հետեւանքներ:

Հակառակ որ նամակի բուն հասցեակիրը Անթոնի Քրաֆդ-Պոնաուն է, հեղնանքի սուր սլաքներէն զերծ չեն մնացած նաեւ այդ շրջանին գործող բոլոր հայասէրները եւ ընդհանրապէս Զուիցերիան իբր երկիր: Վերջինս ջատագովելու ցուցամոլական ոեւէ նախանձայուցութիւն մենք մեզի չենք վերապահեր հոս: Բայց համոզուած ըլլալով, որ երախտագիտութեան զգացումը բարոյական մարդու անկապտելի առաքինութիւններէն մին է, մեր կոտտացող եւ խորունկ վերքերուն «Բարի Սամարացի»ին պէս սպեղանի բերած երախտաւորներու յիշատակը վառ պահելու համար՝ մասնաւորապէս կանգ կ'առնենք 1894-էն իր վեր գուիցերիացի ժողովուրդին կողմէ կազմակերպուած հայասպաստ գործունէութեան վրայ, որու ծիրէն ներս ցայտուն կերպով կ'արտայայտուի նաեւ Քրաֆդ-Պոնաուի դերը:

ՀԱՅԵՐԸ ԶՈՒՒՑԵՐԻՈՅ ՄԷՋ

Զուիցերիոյ հայ համայնքի կազմութեան պատմութիւնը առնչուած է գուիցերիացի ժողովուրդին կողմէ կազմակերպուած մարդասիրական այն սքանչելի օգնութեան հետ, որ ունի աւելի քան 100 տրուան պատմութիւն: Արդէն 1894-ի դեկտեմբերին Սասունի, ապա 1895-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներուն Կ.Պոլսոյ, ինչպէս նաեւ հայկական բոլոր գաւառներուն մէջ տեղի ունեցող կոտորածներուն մասին կը հաղորդէին Զուիցերիոյ մէջ լոյս տեսնող բոլոր օրաթերթերը: Այս հալածանքներու եւ կոտորածներու հեղինակն էր «Կարմիր Սուլթան» անուամբ յայտնի Ապտիւլ Համիտ Բ-ը, որ պատմութեան մէջ ծանօթ է նաեւ իր նենգամիտ սպանութիւններով: Թուրքիոյ սուլթաններու շարքին այս տիրակալը տաղանդաւոր, բայց ամենադաժաններէն մէկն էր, որ չէր խորշեր ընդհուպ իր ազգականներու եւ ընտանիքի անդամներու դիակներուն վրայէն անցնելու: Ան բնաւորութեամբ վախկոտ եւ շատ կասկածամիտ անձնաւորութիւն էր, ինչպէս նաեւ մեծ ատելութեամբ լեցուած էր

յատկապէս հայերուն հանդէպ, ի հետեւանք իր ունեցած մայրական բարդոյթին, որովհետեւ ան կը տառապէր զտարիւն թրքական ծագում չունենալուն համար, ծնած ըլլաով հարէմի հայկական ծագումով ստրկուհիներէն մէկէն:

1895-ի նոյեմբերին արդէն Զուլիցերիոյ մէջ լոյս կը տեսնէր Թուրքիոյ մէջ հայկական կոտորածներուն վերաբերող յօդուած մը Gazette de Lausanne եւ Journal de Genève թերթերուն մէջ: 1895-ի նոյեմբեր 16-ին Լօզանի մէջ հրատակուող Journal religieux des églises indépendantes de la Suisse Romande թերթին մէջ ցիւրիխաբնակ հոգեւորական է. Ժագարի ստորագրութեամբ տպուած յօդուածի մը մէջ հնչեցին հայանապաստ հաւաքներու ուղղութեամբ առաջին կոչերը: Նոյն թերթին մէջ 1895 դեկտեմբեր 28-ին փրոֆ. Ժորժ Կոտէի կողմէ լոյս տեսած է այլ յօդուած մը՝ «Կոտորածները Հայաստանի մէջ» խորագրով, որ ի միջի այլոց դարձաւ առաջինը այս նիւթին նուիրուած ամբողջ յօդուածաշարքի մը:

ՀԱՅԱՆՊԱՍՏ ՕԳՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԷՁ

Հայանապաստ օգնութիւններու ազդակը սակայն հնչեց Նէօշաթէլ քաղաքէն հոգեւորական էտուար Ռոսելէի նախաձեռնութեամբ: 1896-ի մարտ 4-ին ան Նէօշաթէլի Մայր տաճարին մէջ կազմակերպեց «Էկլիզ էնտէփանտանթ»-ին պատկանող բողոքական հոգեւորականներու համաժողով մը: Այս համաժողովին որոշուեցաւ անյապաղ ձեւաւորել ազդեցիկ յանձնախումբ մը՝ փրոֆ. Ժորժ Կոտէի ղեկավարութեամբ: Համաժողովի ատենագրութեան մէջ նշուած է, թէ «Պարոն էտուար Ռոսելէն խորապէս ցնցուած է հայկական կոտորածներու մասին Journal des missions évangéliques de Paris թերթի հաղորդած տեղեկութիւններէն: Ան կը հաւատայ, որ Աստուած կը ցանկայ օգնել տարաբախտ հայ ժողովուրդին ոչ թէ մեծ տէրութիւններուն, այլ եկեղեցիի ծոցին մէջ գտնուող հոգեւոր ուժերուն ճամբով: Ուստի անհրաժեշտ է միանալ «Ազգային եկեղեցի»-ի մեր հոգեւոր եղբայրներուն հետ ազդելու համար Զուլիցերիոյ բոլոր եկեղեցիներուն վրայ, որպէսզի ստեղծենք ընդհանուր շարժում մը ի նպաստ Արեւելքի հալածական քրիստոնէաներուն»: Համաժողովի բոլոր մասնակիցները միաձայն համաձայնած են այս նպատակին համար ընտրել գործնական ուղի մը. յօդուածներու միջոցով լուսաբանել հանրային կարծիքը եւ համապատասխան յայտարարութիւններով ազդել գուլիցերիացիներու խղճին վրայ: Փրոֆ. Կոտէին յանձնարարուեցաւ պատրաստել եւ հրատարակել հայկական կոտորածներուն վերաբերեալ գրքոյկ մը, որով սկիզբը դրուեցաւ հայանապաստ օգնութիւններուն:

1896-ի ապրիլին լոյս տեսաւ «Հայաստանի տառապանքը» խորագրով գրքոյկը՝ արժանանալով հանրութեան ուշադրութեան: «Journal religieux» թերթին մէջ յաջորդական իր յօդուածներով փրոֆ. Կոտէ դարձաւ Զուլիցեր-

իրայի մէջ հայանպաստ օգնութիւններ կազմակերպող պատկառելի անձնաւորութիւն մը: 1896-ի ապրիլ 1-ին իսկ Լօզանի Աւետարանական միութեան կեդրոնական յանձնախումբը հրատապ կոչ մը ուղղեց՝ ի նպաստ տառապեալ հայ ժողովուրդին: Ապրիլ եւ մայիս ամիսներու ընթացքին բազմաթիւ հոգեւորականներ իրենց եկեղեցիներէն ու համայնքներէն ներս այս նպատակին համար հանգանակութիւններ կազմակերպեցին: Այս երեւոյթը շուտով տարածուեցաւ Զուիցերիայով մէկ եւ եկեղեցիներու, մամուլի եւ անհատ բարեգործներու կողմէ կազմուեցան հայանպաստ օգնութիւններու յանձնախումբեր: 1896-ի յունիս 14-22-ին Վանի մէջ եւ ապա օգոստոս 25-28-ին Կ. Պոլսոյ կոտորածներու առիթով, երբ հազարաւոր անմեղ հայորդիներ զոհուեցան, ամբողջ Զուիցերիայի տարածքին բարձրացան բողոքի հսկայ ալիքներ:

Կազմակերպուեցան բազմամարդ ցոյցեր, որոնցմէ ամենամեծը կայացաւ 1896 սեպտեմբեր 7-ին՝ Լօզանի համալսարանի տնօրէն՝ աստուածաբանութեան փրոֆ. Է. Քոմպի գլխաւորութեամբ: Իր ճառին մէջ, Gazette de Lausanne թերթի տնօրէն, անուանի լրագրող Ալպէռ Պոնառ ներկաներէն պահանջեց ամբողջ Զուիցերիոյ տարածքին բողոքի ցոյցեր կազմակերպել: Յուշարարները որոշեցին նոր յանձնախումբ մը յառաջացնել Զուիցերիոյ մէջ հանրագրութիւն մը հաւաքելու նպատակով, որ, որպէս Զուիցերիացիներու կամքի արտայայտութիւն, Զուիցերիոյ կառավարութեան ճամբով պիտի փոխանցուէր եւրոպական մեծ պետութիւններուն: Լօզանի մէջ կայացած այս ձեռնարկները լայն ուշադրութեան արժանացան մամուլ կողմէ, որ բանիւ եւ գործով աջակցեցաւ հանրագրութեան կազմակերպման: Հոկտեմբեր 10-ին Լօզանի յանձնախումբը կառավարութեան ներկայացուց 113,635 ստորագրութիւններով փաստաթուղթ մը: 1897 փետրուար 28-ին Յիւրիխի յանձնախումբի ատենապետ փրոֆ. Գ. Ֆիւրէր դիմեց Զուիցերիոյ համադաշնութեան նախագահ տոբթ. Ատոլֆ Տոյխերին՝ հայանպաստ օգնութիւններու կազմակերպութեան ներկայացուցիչները ընդունելու խնդրանքով: Հանդիպումը կայացաւ նոյն տարուայ մարտ 4-ին: Պատուիրակութեան կողմէ իր ուղերձին մէջ փրոֆ. Ֆիւրէր կը նշէր. «Ներկայացուած 433,080 գուիցերիացիներու ստորագրութիւնները խոր ցաւի եւ բողոքի զօրեղ արտայայտութիւն են քրիստոնեայ հայ ժողովուրդին դէմ կատարուած սարսափելի վայրագութիւններուն առնչութեամբ: Մենք չենք ճանչնար ազգային ատելութիւն եւ ազգային թշնամիներ, ուստի լիայոյս ենք, որ երբ մեր ժողովուրդին խիղճը կ'արտայայտուի հարիւր-հազարաւոր ձայներու միջոցով, ոչ ոք կրնայ մեզի շահադիտական նպատակներ վերագրել: Մեր ժողովուրդը կ'երթայ դէպի այս մեծ հանրաքուէն սրբազան բարկութեամբ եւ ողորմածութեան զգացումներով, որ պէտք է իր ազդեցութիւնը ունենայ Եւրոպայի միւս ժողովուրդներուն վրայ»: Այսպէս, Լօզանի այս ստորահաւաքները, ինչպէս նաեւ Զուիցերիոյ այլ քաղաքներու մէջ, գերազանցապէս կը հետապնդէին հետեւեալ նպատակը. շեշտել գուիցերիացի ժողովուրդի կամքի արտայայտութիւնը կառավարութեան հանդէպ, որպէսզի վերջինս կարենայ համապատասխան խնդրանքով հանդէս գալ եւրոպական մեծ տէրութիւններուն մօտ: Բայց, վախ-

նալով խախտել Զուլիցերիոյ չէզոքութիւնը, կառավարութիւնը խուսափեցաւ գործնական ընթացք տալու այս հանրաքուէներուն. ընդհակառակը՝ ան չզլացաւ 1900 օգոստոս 31-ին հեռագիրով շնորհաւորել սուլթան Աբտիլ Համիտ Բ-ի դահակալութեան 25-ամեակը:

Վերոնշեալ ստորահաւաքներն ու հանրաքուէները սակայն ապարդիւն չմնացին, այլ ուղղակի սատարեցին արթնցնելու զուլիցերիացիներու յատուկ ուշադրութիւնը հայ ժողովուրդի դառն ճակատագրին հանդէպ, որ ուժգնօրէն արտայայտուեցաւ մարդասիրական օգնութիւններու իրականացումով: Հաւաքուած հսկայական նուիրատուութիւնները զուլիցերիացի հայասէրներուն հնարաւորութիւն տուին արեւմտեան Հայաստանի զանազան շրջաններուն մէջ հիմնելու օգնութեան կեդրոններ՝ որբանոցներ, հիւանդանոցներ, խնամատարութեան կայաններ, ինչպէս Սևազի, Պարտիզակի, Ուրֆայի մէջ եւ այլուր:

Անտեղի պիտի չըլլար զուլիցերիացի մեծ հայասէրներու շարքին հոս յիշել հետեւեալ անունները. Լէոփոլտ Յաւր, Գառլ Շէնքլ, Ժորժ Կոտէ, Վիլհելմ Վիլչեր-Իզելին, Եաքոբ Քիւնցլէր, Էլիզապէթ Քիւնցլէր, Գառլ Մէյէր, Մաքս Միւլլէր, Աննա Շուայցէր, Յոհաննէս Շփէօռի, Քաթարինա Շուլքի, Էրի Վիլչէր, Կէրթրուտ Վիլչէր, Թէոտոր Վիլչէր եւ յատկապէս մեծանուն հոգեւորական Անթոնի Քրաֆդ-Պոնաու:

Առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիոյ կրած ջախջախիչ պարտութենէն ետք ստեղծուած էր ոսկեայ առիթ մը, որ դաշնակից պետութիւններու օժանդակութեամբ ստեղծուի պետութիւն մը հայկական բռնագրաւուած հողերուն վրայ, վերջ դնելով քաղաքակիրթ եւ քաղաքակրթութիւն ստեղծող այս հինաւուրց ժողովուրդի թշուառութեան: Դժբախտաբար սակայն, դաշնակիցներէն իւրաքանչիւրը զբաղուած էր իր սեփական շահերու հետապնդումով եւ ունէին ներքին անհամաձայնութիւններ, որոնց իբրեւ հետեւանք ապարդիւն անցան թանկագին շաքարներ եւ ամիսներ՝ ի թերեւ հանելով թէ հայ ժողովուրդին եւ թէ անոր օտարագգի բարեկամներուն բոլոր յոյսերը: Ընդհակառակը, այլ անձնաւորութիւն մը, շատ լաւ ըմբռնելով Թուրքիոյ իրավիճակը, կրցաւ ժամանակը օգտագործել ի նպաստ թուրքերուն կողմէ պիտի կոչուէր Աթա Թուրք՝ թուրքերուն հայր: Ան շատ լաւ ըմբռնեց դաշնակից պետութիւններու ներքին մրցակցութիւնները, եւ, վարպետօրէն օգտագործելով անոնց ռազմավարական տկարութիւնները, հետզհետէ կրցաւ սպառազինել բարոյալքուած թրքական բանակը: 1919-ի օգոստոսին Էրզրումի եւ Սևազի մէջ ան հրաւիրեց Ազգային ժողովներ, իսկ սեպտեմբերին հիմնեց թրքական նոր կառավարութիւնը: Ան կապեր հաստատեց Խորհրդային Միութեան հետ եւ անկէ ստացաւ 300,000 անգլիական ոսկի «կապիտալիստական պետութիւններու դէմ պայքար մղելու նպատակով»: Եւրոպական սեւ շուկայէն կրցաւ գնել մեծ քանակութեամբ զինամթերք, հագուստ, կօշիկ եւ այն ամէնը, որ անհրաժեշտ էր բանակի վերակազմաւորման

համար: Ան հանդէս եկաւ հետեւեալ կարգախօսով. «Թուրքիան՝ թուրքերուն, մեր հողերէն ոչ մէկ շերտ պիտի յանձնուի հայերուն կամ այլ ժողովուրդներու»: 1921-էն 1922, ան յաջողեցաւ վրնտել յոյները, գահընկեց ընել Մուհամմէտ Զ. Սուլթանը եւ չեղեալ համարեց թուրքիոյ նախկին վարչակարգին կողմէ 10 օգոստոս 1920-ին ստորագրուած Սեւրի դաշնագիրը: Ա. աշխարհամարտին յաղթած դաշնակից պետութիւնները այնքա՞ն անտարբեր պիտի ըլլային, որ 1922-ին հայերուն եւ յոյներուն դէմ կատարուած Զմիւռնիոյ ջարդերէն ետք պիտի ստիպուէին սակարկութեան նստիլ թուրքիոյ նորաստեղծ եւ ազգայնամոլութեամբ տոգորուած քէմալական պետութեան հետ, 1923-ին Լօզանի մէջ ստորագրելու համար հայերուն ի վնաս եւ թուրքերուն ի նպաստ փոփոխուած պայմանագիրը: 1915-ին Երիտ. թուրքերուն կողմէ սկսած ցեղասպանութիւնը շարունակուեցաւ քէմալականներու կողմէ եւ հասցուեցաւ իր վերջակէտին: Կիլիկիոյ՝ Մարաշի, Ատանայի, Հաճընի եւ Սիսի, ինչպէս նաեւ այլ շրջաններու մէջ ցեղասպանութենէն փրկուած հայերէն շատերը գազանաբար բնաջնջուեցան:

Այդ ատեն Կիլիկիան կը գտնուէր Ֆրանսական հովանաւորութեան տակ: Թուրքիայէն անգլիական ուժերու քաշուելէն ետք, Ֆրանսացիները առանձին կը դիմագրաւէին թրքական բանակի բոլոր հարուածներուն, զոհ տալով բազմաթիւ սպաններ եւ զինուորներ: Կիլիկիոյ մէջ պատերազմը հետզհետէ աւելի ծախսալից կը դառնար. այս էր հիմնական պատճառներէն մէկը, որ մղեց Ֆրանսական պետութիւնը ուղղակի բանակցելու քէմալականներուն հետ: Արդիւնքն էր 1921 հոկտեմբեր 20-ին Անգարայի մէջ ստորագրուած Ֆրանսեւթրքական բարեկամութեան համաձայնագիրը, որով ամբողջ Կիլիկիան կը յանձնուէր թուրքերուն: Ի հետեւանք այս համաձայնագրին, աւելի քան 150,000 հայ գաղթականներ որոնք Եղեռնէն ետք կը փորձէին վերահաստատուիլ իրենց հողերուն վրայ, անգամ մը եւս լքեցին իրենց հայրենիքը եւ հաստատուեցան Սուրիա եւ Լիբանան: Ֆրանսական բանակին նահանջը բնականաբար ծանր յուսախաբութիւն պատճառեց հայերուն եւ արդարօրէն որակուեցաւ որպէս ծանր դաւաճանութիւն:

ՀԱՅԵՐԸ ԶՈՒՒՑԵՐԻՈՅ ՄԷՋ ԵՒ ԹՐԱՖԴ-ՊՈՆԱՌ

Սուլթան Ապտիւլ Համիտ Բ-ի հալածանքներու օրերէն սկսեալ բազմաթիւ հայեր ապաստան գտած են Զուլիցերիոյ մէջ: Առաջին աշխարհամարտի ընթացքին եւ անկէ անմիջապէս ետք հայ փախստական ընտանիքներ, որոնց կարգին թրքախտէ տառապող անհատներ, հաստատուած են Զուլիցերիա եւ օգնութիւն ստացած են տեղւոյն մարդասիրական գանազան կազմակերպութիւններէն: Սկիզբի օրերուն, թէ ժընեւի եւ թէ Լօզանի մէջ ցրուած հայերուն ընդհանուր վիճակը կը թուէր անմխիթար, որովհետեւ չկային կարօտեալներով զբաղող յատուկ կազմակերպութիւններ կամ կեդրոններ: 1921-ի գարնան յոյսի նշոյլ մը

երեւցաւ. Ժընեւէն 23 քմ. հեռու Պենեան գիւղաքաղաքին մէջ, Լեման լիճի ափին, ծախու էր 21 սենեակնոց ընդարձակ ապարանք մը, որ եթէ գնուէր կրնար շատ յարմար ըլլալ հայ գաղթականներուն որպէս օթեւան: Ծախու գինն էր 525,000 գուլիցերիական ֆրանգ: Քրաֆդ-Պոնաու հայասէրներու կեդրոնական յանձնախումբին առաջարկեց առիթը չփախցնել եւ անապաման գնել կալուածք: Սակայն յանձնախումբի անդամներէն ոչ ոք համաձայն էր նման մեծ գումար մը ներդնել շէնք մը գնելու համար, երբ կային աւելի ծանր եւ առաջնահերթ կարիքներ՝ Թուրքիոյ մէջ հայ որբերու եւ աքսորական ընտանիքներու: Երբ ոեւէ կազմակերպութիւն յանձն չառաւ Զուլիցերիա ապաստանած հայ ընտանիքներու եւ անհատներու խնամակալութիւնը, անհրաժեշտ եղաւ այդ նպատակին ծառայելու համար ստեղծել նոր կազմակերպութիւն մը:

Այսպիսով, 1921 յունիս 21-ին հաստատուեցաւ «Հայկական օճախ»ը (Le foyer arménien): Շատ չանցած, Պիէն քաղաքին մէջ գումարուած հայասէրներու պատգամաւորական ժողովը որոշում կայացուց Պենեանի տունը գնելու մասին: 1921 յուլիս 13-ին «Հայկական օճախ»ը իր դռները կը բանար եւ ապաստան կու տար հայրենագուրկ հայ ընտանիքներու՝ 46 հոգիի: Բայց շուրջ տարի մը ետք հարկ եղաւ այդ ընտանիքները տեղափոխել Ժընեւի մէջ այլ կեդրոն մը, որովհետեւ իրենց տեղը պիտի յատկացուէր հայ որբերուն:

Զմիւռնիոյ աղէտէն ետք, քէմալականներու ճնշումով շատ աւելի վատթարացաւ Կ. Պոլսոյ քաղաքական կացութիւնը եւ հայերու նկատմամբ անոնց ունեցած ատելութիւնը աւելի անսքող դարձաւ: Այս իրավիճակէն մեկնելով, մարդասիրական բոլոր կազմակերպութիւնները, ներառեալ գուլիցերիականները, ստիպուեցան դադարեցնել Թուրքիայէն ներս իրենց որբախնամ աշխատանքները եւ որբերը տեղափոխել աւելի ապահով երկրներ: Ամերիկեան Near East Relief կազմակերպութեան օգնութեամբ գուլիցերիական կեդրոնական յանձնախումբը Կ. Պոլսոյ մէջ իր խնամքին ենթակա կազմակերպութիւններուն փոխանցեց անհրաժեշտ ճամբու ծախսը եւ հրահանգեց անմիջապէս որբերուն հետ միասին հեռանալ Թուրքիայէն: Անգլիական եւ ամերիկեան հայասիրական կազմակերպութիւնները Յունաստանի Քորֆու քաղաքը փոխադրեցին հազարաւոր որբեր: 1922 նոյեմբեր 19-ին 41 որբեր, 7 պաշտօնեաներու եւ 2 ուսուցչուհիներու հետ միասին Կ. Պոլսէն հեռացան դէպի Մարսիլիոյ նաւահանգիստը, ուրկէ 1922 դեկտեմբեր 1-ին երկաթուղիով հասան Զուլիցերիոյ Պենեան քաղաքը:

1922-1930 թուականներուն Պենեանի որբանոցը ընդունեց 142 որբեր (101 տղայ եւ 41 աղջիկ), իսկ Ժընեւ կեդրոնը՝ 85 փախստականներ, այրիներ, ծերեր, հիւանդներ եւ որբեր:

Զուլիցերիոյ հայասէրներու կեդրոնական յանձնախումբը յաճախ դիմումներ կը ստանար տեղացիներէ, երեխաները որդեգրելու խնդրանքով: Սակայն յանձնախումբը ընթացք չէր տար այդ դիմումներուն նկատի ունենալով որ երեխաները պիտի մեծնային իրենց համար խորթ ընտանիքներու մէջ, արհեստականօրէն իւրացնելով մշակոյթ մը, որ իրենց սեպհականը չէր: Այդպիսով

անոնք պիտի ունենային երկփեղկուած հոգիներ՝ դաստիարակութեամբ զուր-ցերիացի, բայց արմատներով հայ: Հայասէրներու կեդրոնական յանձնախումբը մտավախութիւն ունէր, որ այս երեխաները դժուարութիւն պիտի ունենային ճանչնալու իրենց ինքնութիւնը եւ ազգային պատկանելութիւնը, կողմնորոշուելու հայ թէ զուրցերիացի ըլլալուն միջեւ: Այս մեծահոգի կեցուածքը պիտի հանդիսանար Զուրցերիոյ հայ համայնքի կազմաւորման հիմնակէտը:

Պենեանի որբանոցին երեխաներուն համար ֆրանսերէնին կից կազմակերպուեցան հայերէնի, հայոց եւ հայ առաքելական եկեղեցւոյ պատմութեան եւ մշակոյթի դասեր: Քրաֆդը-Պոնառի հիմնական նպատակներէն մէկն էր այս երեխաներէն պատրաստել ընտրանիներու խումբ մը, որ պիտի կազմէր թերեւս մօտ ապագային ստեղծուելիք անկախ Հայաստանի պետութեան ղեկավարութիւնը: Ան ամբողջովին համոզուած էր, որ անկախ Հայաստանի ստեղծումը արդարութեանէն բխող հրամայական պահանջ մըն էր: Բայց աւա՛ղ, Լօզանի դաշնագրէն, ինչպէս նաեւ 1932-ին Ազգերու Լիկա Թուրքիոյ մուտքէն ետք, բոլոր իրապաշտ մարդոց համար յստակ դարձաւ, որ այլեւս անհնար էր հայկական հարցի քաղաքական լուծումը: Այս իրողութիւնը Քրաֆդը-Պոնառի համար եղաւ ամենացաւալին. իր որբուկները միշտ պիտի մնային խաբուած ժողովուրդի մը տարաբախտ զաւակները:

Այսօր դժուար է ստոյգ ճշտել Բենեանի որբանոցէն անցած որբերուն թիւը. մինչեւ 1939, 250 տղաք եւ աղջիկներ ուսանած եւ հասած են կեանքին. անոնցմէ ոմանք ներգաղթած են Խորհրդային Հայաստան, Միացեալ Նահանգներ եւ Գանատա, իսկ մէկ մասը մնացած է Զուրցերիա:

ՀԱՅԵՐԸ ԺԸՆՇԻԻ ՄԷՁ

Վերոնշեալ փաստերուն պէտք է աւելցնել նաեւ այն իրողութիւնը, որ Զուրցերիոյ հայ համայնքի կազմաւորման նախնական փուլի ընթացքին, Պագելի, Յիւրիխի, Յրիպուրկի, Լօզանի եւ Ժընեւի համալսարաններէն ներս իրենց կրթութիւնը ստացած են բազմաթիւ հայ անուանի գրողներ եւ ակնառու դէմքեր, ինչպէս Մեծ Եղեռնի նահատակ բանաստեղծ՝ Բժ. Ռուբէն Սեւակ, Աւետիք Իսահակեան, Դերենիկ Դեմիրճեան, հրապարագիր Գրիգոր Արծրունի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբեկեան:

1887-ին ընկերվարական կողմնորոշում ունեցող ուսանողներու խումբ մը — Աւետիս Նազարբեկ, Մարօ Նազարբեկ, Ռուբէն Խանազատ, Գաբրիէլ Քաֆայեան եւ այլ յեղափոխական գործիչներ — Ժընեւի մէջ հիմնեցին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը: Մինչեւ 1891, հոս կը հրատարակուէր Հնչակեան կուսակցութեան «Հնչակ» պաշտօնաթերթը:

1890-ին Թիֆլիսի մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան ձեւաւորումէն քիչ անց, 1891-1914 թուականներուն, Ժընեւի մէջ հրատարակուեցաւ կուսակցութեան «Դրօշակ» պաշտօնաթերթը: 1907-ին Լօ-

զանի մէջ կազմաւորուեցաւ հայ ուսանողներու «Արմենիա» միութիւնը: Հայ ուսանողներուն լուրեր հայթայթելու համար 1914-ին կը հրատարակուէր «Տեղեկատու բիւրօ» անունով ուսանողական թերթ մը:

1896-էն իսկ Ռեթէոս Պէրպլէրեանի ղեկավարութեամբ ժընեւի մէջ կը գործէր հայկական դպրոց մը, իսկ Լօզանի մէջ 1904-ին Մարտիրոս Նալպանտեանի կողմէ հիմնուեցաւ «Հայկազեան վարժարան», որ միաժամանակ գիշերօթիկ դպրոց էր: Պէտք է ըսել, որ այս դպրոցներու գոյութիւնը Զուլիցերիոյ մէջ կարճատեւ եղած են, որովհետեւ այն ատեն չկար շօշափելի թուաքանակով հայկական համայնք մը, որ կարենար այս հաստատութիւններու գործունէութիւնը նիւթապէս ապահովել:

Ժընեւի մէջ եկեղեցական արարողութիւններ սկսած են մատուցուիլ 1925-էն սկսեալ, որուն համար կազմուեցաւ հոգաբարձութիւն մը Սեդրակ Փափազեանի գլխաւորութեամբ: Մնայուն հոգեւորականի մը բացակայութեան պատճառով այն ատեն տօնական օրերուն Փարիզէն կը հրաւիրուէր Վռամշապուհ վրդ. Քիպարեան, Ս. Պատարագ մատուցելու համար: Արարողութիւններու երգեցողութիւնը կը կատարէր Բենեան որբանոցի երկսեռ երգչախումբը:

Նախնական շրջանին Զուլիցերիոյ փոքրիկ հայ համայնքի եկեղեցական հայածէս արարողութիւնները կը կատարուէին տեղական այլազան (կաթողիկ, բողոքական, անկլիքեան) եկեղեցիներու մէջ: Բայց երբ Բ. աշխարհամարտէն ետք Լիբանանէն, Սուրիայէն, Իրանէն եւ Կ. Պոլսէն ներգաղթած հայերուն շնորհիւ համայնքի թիւը յարաբերաբար մեծցաւ, զգալի դարձաւ ուրոյն եկեղեցական շէնք մը ունենալու անհրաժեշտութիւնը: Այսպիսով Զուլիցերիոյ մէջ հայ համայնքի ներկայութեան գերազանց արտայայտութիւնը եղաւ ժընեւ թրուանէ արուարձանին մէջ կառուցուած հայկական եկեղեցին, որ երջանկալիչատակ Վազգէն Ա. Վեհափառի օրհնութեան կոնդակով օծուեցաւ Ս. Յակոբ Մծբնեցի Հայրապետի անունով 1969 սեպտեմբեր 14-ին՝ ձեռամբ Սերովբէ արք. Մանուկեանի: Եկեղեցւոյ կառուցման գլխաւոր բարերարն էր եգիպտահայ մեծահարուստ գործարար Յակոբ Թօփալեան, որու տրամադրած իշխանական նուիրատուութիւնը համալրուեցաւ տեղւոյն համայնքի նիւթական եւ բարոյական գործուն մասնակցութեամբ: Շնորհիւ ճարտարապետ էտուար Իւթիւճեանի՝ նորակառոյց եկեղեցին կրելով հայ միջնադարեան ճարտարապետութեան գրոշմը, ժընեւի քրիստոնէական համայնքներու ընտանիքին մէջ աչքի կ'իյնայ իր շեշտուած հայկականութեամբ:

Այսպէս էր գուլիցերիացի հայասէրներու պատմութիւնը, որոնց շարքին կը գտնուէր հայ համայնքին համար յատուկ նշանակութիւն ունեցող Անթոնի Քրաֆդ-Պոնառ, որուն քննադատական, մոռյլ եւ սեւ երգիծանքով լի նամակով դիմած է Լեռ Կամսար: Այս հայասէրներուն ցուցաբերած բարոյական անգնահատելի պատրաստակամութեան եւ կազմակերպած նիւթական հսկայ նուիրատուութիւններուն շնորհիւ է, որ Մեծ Եղեռնի մահուան բովէն անցած ծնողազուրկ հայորդիներուն յետագային կազմած ընտանիքներուն հիման

վրայ ձեւաւորուեցաւ եւ հետզհետէ աւելի բազմացաւ Զուիցերիոյ հայ համայնքը, որուն թիւը այսօր, ողջմիտ տուեալներով, կը հասնի 4,000-ի:

ՖԻԼԱՆՏՐՈՊԵՆԵՐԷՆ ԱՐՄԵՆՈՖԻԼՆԵՐ

«Ո՞վ է տեսեր ցայսօր, որ դիւանագիտական գործերու մէջ սէրը դեր խաղայ կամ ի՞նչ օգուտ կը յուսաք բերել հայ ազգին ձեր սիրովը», կ'ըսէ Լեւ Կամսար իր Քրաֆդ-Պոնառին ուղղուած նամակին մէջ:

Յայտնի երեւոյթ է, որ դիւանագիտութեան մէջ սէրը չափանիշ չէ. արդարեւ, դիւանագիտութեան մէջ չկան մնայուն բարեկամներ եւ թշնամիներ, այլ գոյութիւն ունին հիմնական շահեր: Այսուհանդերձ, ինչպէս աստղագարդ երկինքը մարդու գլխուն վրայ, եթէ անոր մէջ չըլլար բարոյական օրէնքը, եթէ խղճի զգացումն ու կեանքէն ներս անով կողմնորոշուելու գիտակցութիւնը սկզբունք չըլլար, ի՞նչ տարբերութիւն պիտի ըլլար մարդ արարածին եւ գազանին միջեւ. մարդը մարդուն համար գայլ կը դառնար, ինչպէս կ'ըսէ լատինական հին առածը:

Զուիցերիոյ մէջ հայանպաստ օգնութիւններ կազմակերպով բոլոր երախտաւորները կոչուած են ֆիլանտրոպներ (philanthropes): Յունարէնի գոյգ արմատ բառերով (ֆիլոս եւ անտրոպոս, այսինքն՝ սէր եւ մարդ) կազմուած այս յղացքի հիմքին մէջ յատուկ կարեւորութիւն ունի մարդու նկատմամբ սիրոյ ըմբռնումը: Մարդասիրութիւնը եղած է ուրեմն 19-րդ դարի աւարտէն մինչեւ 20-րդ դարի 30-ական թուականները երկարող ժամանակահատուածին Զուիցերիոյ մէջ ծաւալած եւ օգտաշատ առաքելութեան վերածուած հայասիրութեան հիմնական շարժառիթը: Հայանպաստ գործուէնութեան այս ընդարձակ դաշտին մէջ, ի շարս այլ մարդասէրներու, իբրեւ ազնիւ մշակ հանդէս եկած է նաեւ Անթոնի Քրաֆդ-Պոնառ, որու անմեռ յիշատակին առկայ յօդուածով փորձեցինք անդրադառնալ երախտագիտութեան անկեղծ զգացումով:

Աբել ֆհնյ. Մանուկեան
(հոգեւոր հովիւ Զուիցերիոյ հայոց)
Փրնեւ, 12 յուլիս 2007

Սոյն յօդուածին բնագիրը եղած է արեւելահայերէն եւ յատուկ «Լոյս»ի համար փոխադրուած է արեւմտահայերէնի՝ Վիզէն Արրահամեանի կողմէ:

ՈՐՈՓԻՆԷՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅՈՒ ԵՒ Ս. ՕԳՈՍԻՆՈՍԻ ՀԱՅ ՆԱՄԱԿԱԳԻՐԸ

Յոյժ գնահատելի երեւոյթ է այն հանգամանքը, որ ներկայումս, յանձին թամար Տասնապետեանի, հայութեան մէջ ունենք մի տաղանդաւոր աստուածաբանուհի: Երանի թէ իր նմանները շատ լինեն մեր եկեղեցում, որպէսզի փոխուի այն սխալ մտայնութիւնը, որի համաձայն աստուածաբանութիւնը նկատուած է լոկ տղամարդկանց մենաշնորհն ու սեփական կալուածքը:

Միւս կողմից էլ պէտք է ասել, որ թամար Տասնապետեանի աստուածաբանական վաստակը իսկապէս հիացմունքի արժանի է: 2006 թ. Բէյրութում հրատարակուած նրա «Որոգինէս սուրբ» անունը կրող գրքի վերջաւորութեան մենք տեսնում ենք ցանկը նրա լոյս ընծայած աւելի քան 60 գրքերի, որոնք ընդհանուր առմամբ բաղկացած են աստուածաբանական մանրակրկիտ ուսումնասիրութիւններից, Յիսուսի չարչարանաց խորհրդի, Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի վերաբերեալ մեր նախնեաց գրութիւններից, հայրաբանական յօդուածներից, ինքնատիպ նամակներից՝ ուղղուած Որոգինէս Աղէքսանդրացուն (185–253) եւ Ս. Օգոստինոսին (354–430)՝ դիտուած Ֆեմինիստ աստուածաբանութեան տեսանկիւնից:

Մեր տրամադրութեան տակ ունենք միայն մի քանիսը վերոյիշեալ հրատարակութիւններից, որոնք ինքնըստինքեան խօսում են թամարի մտաւորական եւ գիտական բարձր պատրաստութեան, ինչպէս նաեւ նրա մաքրաբոյր հոգու եւ աստուածատուր շնորհների մասին:

Վերջերս նա ինձ ուղարկել էր իր մէկ կարեւոր աշխատութիւնը, որ կոչւում է «Որոգինէս սուրբ»: Դա երկարաշունչ եւ միաժամանակ աստուածաբանական հմտութեամբ ու խորքով գրուած մի նամակ է՝ ուղղուած Որոգինէսին: Նմանատիպ մի նամակ նա հրատարակել էր 2005 թ. ուղղուած Ս. Օգոստինոսին:

Որոգինէս Աղէքսանդրացին ամենայն իրաւամբ համարւում է հիմնադիրը Սուրբ Գրոց գիտականացուած մեկնութեան: Միեւնոյն ժամանակ նա եղել է ներհուն քարոզիչ, վաստակաւոր դաստիարակ, քրիստոնէութիւնը ջատագովող փայլուն աստուածաբան: Նրա որոշ եզրայանգումները կրել են ազդեցութիւնը ստոյիկեան եւ նոր-պլատոնական մտածելակերպի: Հետագայում նա դատապարտուել է Կ. Պոլսի եկեղեցական ժողովից (553 թ.): Այդուհանդերձ նա համարւում է Եկեղեցու առաջին հայրերից մէկը:

Թամարը հէնց սկզբից չի վարանում Որոգինէսին որպէս սուրբ ընդունելու, դա երեւան է գալիս ուղղակի գրքի վերնագրից՝ «Որոգինէս սուրբ»:

Քանի դեռ Եկեղեցին պաշտօնապէս չի հռչակել Որոգինէսին իբրեւ սուրբ, թամարի՝ այդ կապակցութեամբ առած քայլը միգուցէ յանդգնութիւն համարուի, բայց, իրականում, դա վկայում է այն մասին, որ ինքը խորապէս ուսում-

նասիրել եւ լաւագոյնս ըմբռնել է մեծ աստուածաբանի անբասիր կեանքն ու վաստակը: Այս առումով կարելի է նոյնիսկ ասել, որ Թամարը կանխում է Հոռմի պապին, որ նոր միայն վերջերս, 2007 թ. Ապրիլի 25ին, իր շնորհած հերթական մէկ ունկնդրութեան ընթացքում ասել է. «Նորհրդածելով եկեղեցու հնագոյն շրջանի մեծագոյն անձնաւորութիւնների մասին, եկէք այսօր ճանաչենք նրանցից ամենահռչակաւորին՝ Որոզինէս Աղէքսանդրացուն»:

Որոզինէսի կեանքի եւ աստուածաբանական վաստակի մասին ամփոփ տեղեկութիւններ տալուց յետոյ, Թամարը անցնում է իր բուն նպատակին, բացատրելու համար այն, որ Որոզինէսի արտայայտութիւններում նկատուում է որոշ կնատեսացութիւն կամ իգականութեան արհամարհում: Դրա հիմնական պատճառը այն հայրատիրական ոգին է, որ գերիշխող է եղել Եկեղեցու նուիրապետութեան, վարդապետութեան եւ Ս. Գրոց մեկնութեան բնագաւառներում: Այդուհանդերձ Թամարը, արդար մօտեցումով, մէջբերում է նաեւ Որոզինէսի այն խօսքերը, ուր նա հոգեւոր իմաստով չի ընդունում որեւէ խտրականութիւն այրերի եւ կանանց միջեւ, երբ գրում է. «Աստուածային Սուրբ Գիրքը չուզեր այրերը եւ կիները իրարմէ բաժնել սեռով: Աստուծոյ առջեւ չկայ սեռի զանազանում, բայց հոգիին արժէքով է որ այր կամ կին կ'ըստինք: Որքան կնոջական սեռին պատկանողներ Աստուծոյ քով կը համարուին իբրեւ զօրաւոր այրեր, որքան զօրաւոր այրեր դրուած են տկար եւ նուաղկոտ կիներուն կարգին» (Թ. Տ., էջ 45-46):

Բայց Թամարը դրանով չի գոհանում: Նա, համաձայն Փեմինիստ աստուածաբանութեան կատարած որոնումների ձեռք բերած տուեալների, հաստատում է, թէ «Նախնական Եկեղեցիին բազմաթիւ համայնքները բաղկացած էին կիներէ եւ այրերէ, եւ կիները հոն այրերուն հետ հաւասար էին, վերցնելով առաքեալի, եպիսկոպոսի եւ համայնքի պատասխանատուի դերեր» (Թ. Տ., էջ 9):

Ճիշտ է, որ նախնական Եկեղեցու բազմաթիւ համայնքները բաղկացել էին կանանցից եւ տղամարդկանցից՝ ընկերային համահաւասար իրաւունքներով, բայց ի՞նչ փաստ կայ, որ նրանք ստանձնում էին նաեւ միեւնոյն պաշտօնները, որ այդ համայնքներում կանայք վարում էին «առաքեալի, եպիսկոպոսի եւ համայնքի պատասխանատուի դերերը»: Մանաւանդ նկատի ունենք եպիսկոպոսի դերը: Թէ ինչպիսին է եղել այդ եպիսկոպոսի հանգամանքը՝ չի ասւում: Արդեօ՞ք նա նկատուել է պարզապէս իբրեւ «տեսուչ եկեղեցեաց», այսինքն բողոքականների ընդունած superintendentի իմաստով, միայն եպիսկոպոսի վարչական հանգամանքով, թէ՞ նա ըստ առաքելական յաջորդականութեան ձեռնադրութիւն ստացած եւ հոգեւոր իշխանութեամբ օծուած մէկն է եղել:

Ամենայն հաւանականութեամբ այդ առաքեալի եւ եպիսկոպոսի (վարչական առումով) դերը ստանձնած լինի նաեւ Թամարի յիշած Մարիամ Մագդաղենացին, որն իսկապէս էլ եղել է Քրիստոսի յարութեան պատգամի առաջին վկան եւ ըստ պարականոն Աւետարանների կամ գնոստիկեան վարդապետութեան՝ Տիրոջ սիրելի աշակերտուհին: Մարիամ Մագդաղենացուն վերագր-

ուած Աւետարանում յիշուած է, թէ նա մի տեսիլքում Յիսուսից ստանում է յատուկ ուսուցումներ, որի պատճառով էլ Պետրոս առաքեալը զարմանքով ասում է. «Վարդապետը խօսել է մի կնոջ հետ այնպիսի բաների մասին, որոնք անգիտանում ենք: Այնպէս որ հարկ է վերադառնալ ու լսել այդ կնոջը: Արդեօ՞ք Տէրը նրան մեզանից գերադասել է»:

Վերոյիշեալի առնչութեամբ Թամարը, ի շարս այլ գրութիւնների, յիշում է նաեւ Փիլիպպոսի Գործերը (4-5րդ դարերում գրուած), ուր «Մարիամ Քրիստոսէն կը ստանայ առաքեալը իր առաքելութեան մէջ քաջալերելու եւ իրեն իր ճամբորդութիւններուն մէջ ընկերակցելու առաքելութիւնը» (Թ. Տ., էջ 94): Այնուհետեւ հոյակապ է Թամարի եզրակացութիւնը.

«Մարիամ Մագդաղենացին, որուն Յիսուս «կիրն» կ'անուանէ, կ'անձնաւորէ Փրկիչը փնտռող մարդկութիւնը: Հարսը, ան նաեւ Եւան է: Եղեմի պարտէզին մէջ առաջին կիրնը նախապէս խոյս տուած էր, Յարութեան պարտէզին մէջ, կիրնը կը ճանչնայ իր Վարդապետը եւ այսուհետեւ զայն չի լքեր: Երեկոյեան գեփիւռին մէջ Աստուած կը խօսէր անոր հետ, որ պիտի հմայուէր մեղքով, Յարութեան առաւօտուն ան կուգայ չորցնել արցունքները անոր՝ որ եօթը դեւերէն արձակած էր եւ անկումի Եւան կը դառնայ նաեւ հաւատքի Եւան» (Թ. Տ., էջ 96):

Թամար Տասնապետեանը, Ս. Օգոստինոսին եւ Որոգինէսին ուղղած իր նամակներով, փորձ է անում նոր Կտակարանի երկու կնոջական կերպարներին՝ Մարիամ Աստուածածնին եւ Մարիամ Մագդաղենացուն ազատագրել Աւետարանի հայրատիրական խմբագրումների կաշկանդումներից: Դա ինքնին ողջունելի փորձ է: Դրա հետ մէկտեղ, եթէ նկատի ունենանք Թամարի ասածի համաձայն Եկեղեցին իբրեւ «հաստատութիւն» (Թ. Տ., էջ 10), ապա անհրաժեշտ է, որ այն ձեռքագատուի տղամարդկանց տիրապետութիւնից: Բայց երբ հարցը տեղափոխուում է տարբեր մակարդակների, երբ, օրինակ, Ֆեմինիստական դիրքերից փորձ է արւում մեկնաբանել Ս. Երրորդութեան կամ Քրիստոսաբանութեան յատուկ հարցեր, այն ժամանակ, դժբախտաբար, կատարւում են լուրջ շեղումներ քրիստոնէական ուղղափառ դրոյթներից, ընդ որում հանդէս է գալիս բարոյագիտական մի նոր հայեցակարգ, որը բոլորովին հեռու է քրիստոնէական լինելուց:

Հարկ է շեշտել, որ Աստուծոյ մասին գոյութիւն ունեցող վարդապետական բնոյթի բացատրութիւնները հիմնուած են աստուածայայտնութեան տուեալների վրայ, այնքանով որ դրանք անհրաժեշտ են մեր փրկութեան համար: Մեղադրանքը, ըստ որի հայրատիրական մեկնաբանութիւնները զրկել են Աստծուն իր իզականութիւնից, բոլորովին անհիմն է եւ անտեղի, երբ յատկապէս առ ոչինչ է համարւում Լոգոսի մարմնացումը տղամարդու կերպարանքով: Ինքնին վտանգաւոր է աստուածային խորհուրդների մասին խօսելիս՝ ստուգութիւն ցուցաբերելը, միշտ պիտի նկատի ունենալ Հերոնիմոսի ասածը. «Այն, ինչպիսին որ Աստուած չէ, դա է որ մենք գիտենք, իսկ ինչպիսին որ նա է մենք չգիտենք» (Hieronymus, Texte der Kirchenvater, 1, Munchen,

1963, էջ 25):

Յիսուս Բրիստոսի մարդեղութեան խորհուրդը ինքնաբերաբար մեզ պէտք է մղի փառատրական առումով (եւ ոչ թէ կոյր հաւատքով) պաշտելու այդ խորհուրդը եւ դրա մասին խոկալու, այլապէս նոյն սխալը կը գործենք, ինչ որ արեցին 451 թ. Քաղկեդոնի ժողովի մասնակիցները քննարկելով մարմնացած Յիսուսի աստուածային եւ մարդկային բնութիւնները եւ դրանց վերաբերեալ բանաձեւումներ որդեգրելով, որոնք պարզապէս մարդկային մտքի արգասիք են: Իսկ թէ ինչո՞ւ Յիսուսը մարմնացաւ տղամարդու կերպարանքով, դա էլ ունի իր խորհուրդը, որն արդիւնք է աստուածային անկաշկանդ նախընտրութեան եւ կարգաւորութեան: Իսկ եթէ սիրահար ենք հարցադրումներ անելու նման գերբնական խորհուրդների մասին, այն ժամանակ հետեւողական լինելու դէպքում, պիտի հարց տանք նաեւ, թէ Յիսուսը ինչո՞ւ չծնուեց երկսեռ յատկանիշներով, քանի որ Ֆեմինիստներն ասում են, թէ տղամարդու կերպարանքով մի Փրկիչ չի կարող փրկել կանանց: Ինչո՞ւ նա չծնուեց իբրեւ յոյն, հռոմէացի, սեւամորթ կամ եգիպտացի, քանի որ եգիպտացիք էլ ունէին գաղափարը մի գերագոյն աստուածութեան:

Որպէսզի ձերբազատուենք նման անտեղի հարցեր տալուց եւ քննարկումներ անելուց, անհրաժեշտ է, որ սկզբից եւեթ գիտենանք ու համոզուենք, որ Աստուած ընտրութիւն անելիս՝ բոլորովին անկախ եւ անկաշկանդ է գործում, նա ենթակայ չէ մեր նախադրութիւններին: Այս է պատճառը, որ նրա նախաձեռնած ողջ գործընթացը մարդկանց փրկելու նպատակով, կորստեան մատնուածների համար «յիմարութիւն» է (Ա. Կորնթ. Ա 18), այլ խօսքով «հրեաների համար գայթակղութիւն է եւ հեթանոսների համար յիմարութիւն» (Ա. Կորնթ. Ա 22-25): Աստուծոյ իմաստութիւնը տարբեր է մարդկային իմաստութիւնից:

Վերագառնալով մեր բուն նիւթին՝ մենք ամենայն զնահատանքով արձանագրում ենք, թէ Թամար Տասնապետեանի «Օգոստինոս սիրելի» եւ «Որոգինէս սուրբ» գրքերում տեսանելի է մի առողջ, կշռադատուած եւ սուրբգրային տեսակէտների հետ հաշտ «Ֆեմինիզմ», որն իբրեւ ուղենիշ ունի Ս. Կոյս Մարիամի տիեզերական մայրութիւնն ու Մարիամ Մագդաղենացու եկեղեցական առանձնայատուկ առաքելութիւնը իբրեւ քարոզող եւ փոխանցող Տիրոջ յարութեան փրկաբեր պատգամի:

Վերոյիշեալ երկու գրքերը մեզ աւիթ են տալիս նշուած երկու սրբուհիների կերպարները աւելի մօտիկից ճանաչելու եւ վերագնահատելու նրանց տեղն ու դիրքը եկեղեցում:

Մեզ կը մնայ ասել. Վարձքդ կատար, սիրելի Թամար, դո՛ւ հայ աստուածաբանուհի, որ առաքինի կենցաղովդ ու բեղուն վաստակովդ բարձրացնում ես հայուհեաց դերն ու վարկը մեր սուրբ Եկեղեցու նուիրական կեանքում:

Յակոբ Ա.րբ. Գլնեեան

ՄԱՅԵՍՏԵՐ ԷԿԶԱՐՏ

(1260-1328)

13-րդ դարը ողջ քրիստոնեայի Եւրոպայի համար հանդիսանում է վանական կարգերի եւ կրօնական միատիկ շարժումների ծաղկման շրջան: Դա հէնց այն ժամանակահատուածն է, երբ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնները իրար դէմ լարուած պայքար էին մղում՝ նիւթական հարստութիւն ձեռք բերելու համար եւ հեղինակազրկելու մէկը միւսին: Դրա վրայ պէտք է աւելացնել մի շարք տարածքներում տեղի ունեցող բռնութիւնները, պատերազմները, կեղեքումները, համաճարակները, խաչակրական արշաւանքները եւ այլեւայլ արհաւիրքներ:

Ահաւասիկ, այսպիսի մի խառնաշփոթ եւ պատուհասներով լի իրադարձութիւններում, բազմաթիւ տղամարդիկ ու կանայք իրենք իրենց յանձնում են ապաշխարութեան՝ որոնելով հոգեկան անդորր եւ աստուածային խաղաղութիւն: Նրանց ստեղծած համարեայ բոլոր հոգեւոր շարժումների հիմքում կարեւոր տեղ են գրաւում կամաւոր աղքատութիւնն ու խոնարհ ապրելակերպը, նպատակ ունենալով նմանուել Քրիստոսի եւ Նրա առաքեալների վարած կեանքին:

Այսպիսով հանդէս են գալիս Պետրոս Վալդուսի աշակերտները՝ «Լիոնի Աղքատներ» անունով, ինչպէս նաեւ ալբրեյոյցիները հարաւային Յրանսիայում: Սրանք իրենց հետապնդած նպատակներում այն աստիճան են առաջ գնում, որ ընկնում են հերետիկոսութեան մէջ՝ մերժելով եկեղեցական բոլոր խորհուրդները, ինչպէս նաեւ որեւէ կարգի միջնորդութիւն՝ մարդկանց եւ Աստծոյ միջեւ:

Այս դարաշրջանում, սակայն, սկիզբ առած խորհրդապաշտ շարժումների մի մասը չի անջատուում Եկեղեցու դաւանած վարդապետութիւնից: Այս առումով արժէ յիշել սուրբ Յրանչիսկոս Ասիգիի եւ սուրբ Դոմինիկոսի պարագաները, որոնք, քաջալերուելով Ինովկենտիոս Գ պապից, կարողացան իրենց հոգեւոր շարժումները միացնել Եկեղեցուն:

1221 թ. մուտք են գործում Գերմանիա Յրանչիսկեաններն ու Դոմինիկեանները: Նրանք հաստատուում են Քյոլնում եւ իրենց կողմն են շահում բազմաթիւ հաւատացեալների սրտերը, որոնցից չէր պահանջուում հրաժարուել ընտանեկան եւ ընկերային իրենց պարտականութիւններից: Նրանք յանձն էին առնում օգնութեան հասնել աղքատներին, խնամել հիւանդներին եւ մանաւանդ ուշադրութիւն դարձնել պատերազմներում զոհուածների երեխաներին:

Դոմինիկեան վանականների հովանաւորութեան ներքոյ հասակ է առնում եւ կրթւում գերմանացի միջնադարեան մեծ աստուածաբաններից եւ խորհրդապաշտ խոշորագոյն փիլիսոփաներից մէկը՝ Էկիարտ ազգանունով, որը հետագայում ստանում է «Մայեստեր» (Մագիստրոս) տիտղոսը եւ այնուհետեւ կոչւում է Մայեստեր Էկիարտ, դառնալով հմուտ դասախօս Քյոլնում,

Փարիզում եւ Ստրազբուրգում:

Այստեղ հարկ ենք համարում հակիրճ կերպով բացատրել, թէ ո՞վ է իսկական խորհրդապալաշտը: Խորհրդապալաշտը նա է, որ իր մէջ եւ իր շուրջը գտնուող ամէն ինչում տեսնում է Աստծոյ խորհրդաւոր ներկայութիւնը, նրա զօրութիւնն ու ազդեցութիւնը: Այդ գիտակցութիւնից մղուած խորհրդապալաշտը համապարփակ սիրով գրկում է ողջ մարդկութիւնն ու տիեզերքը, սիրտը լցւում է կարեկցութեամբ հանդէպ աստուածային ողջ ստեղծագործութեան:

Ենթադրւում է, թէ Մայեստեր Էկհարտը ծնուել է 1260 թ. Թիւրինգենեան Հոխհայմ քաղաքում (Գերմանիա), ազնուականի մը ընտանիքում: Ասացինք՝ ենթադրւում է, քանի որ մի հին արձանագրութիւն Էկհարտ ազգանունան կողքին նշում է Հոխհայմցի, իսկ ծննդեան թուականը վերականգնւում է յատկապէս այն փաստի վրայ, որ նա 1293-94 ուսումնական տարում իր մուտքի անդրանիկ դասախօսութիւնն է կարդացել Փարիզի համալսարանում, որի կանոնադրութեան համաձայն նման դասախօսութեամբ հանդէս եկող անձը պէտք է առնուազն 33 տարեկան լինէր: Թէ՛ այդ դասախօսութեան եւ թէ՛ նոյնպէս Փարիզում 1294 թ. Ապրիլի 18ին արտասանած զատկական քարոզի բնագրերը հասել են մեզ:

Էկհարտի անունն էլ մեզ յայտնի չէ: Ոմանք նրան անուանում են Յովհաննէս, բայց դա ստոյգ տուեալների վրայ չէ հիմնուած: Նա համարեայ միշտ հանդէս է եկել իր Էկհարտ ազգանունով եւ Մագիստրոս (Մայեստեր) տիտղոսով: 18 տարեկանում նա մտնում է Էրֆուրտի Դոմինիկեանների վանքը, դրանից յետոյ աստուածաբանական բարձրագոյն կրթութիւն ստանալու համար ուղարկւում է Քյոլն քաղաքը: 1285ին ձեռնադրւում է քահանայ: Մի քանի տարի յետոյ նա դառնում է վանահայրը Էրֆուրտի դոմինիկեանների վանքի:

Դարավերջում նա մեկնում է Փարիզ եւ տեղի համալսարանում ձեռք է բերում «մագիստրոս» գիտական աստիճան: 1303 թուականին նա վերադառնում է Գերմանիա: Իր տուած շարունակական այցելութիւնների ընթացքում գերմանական զանազան կրօնական կենտրոնների՝ նա գրում է իր երկու նշանաւոր աշխատութիւնները՝ «Հոգեւոր Հանդիպումներ» եւ «Մատեան Աստուածային Մխիթարութեան»: Սակայն Էկհարտին հռչակաւոր են դարձնում նրա քարոզների հաւաքածուն:

Մխիթարութեան Մատեանում Էկհարտը յաճախակի մէջբերումներ է կատարում Ս. Օգոստինոսից, Պողոս առաքեալից, Աւետարաններից, Սողոմոն Իմաստունի գրքերից, նպատակ ունենալով հեռացնել հաւատացեալներին աշխարհի վաղանցուկ հաճոյքներից եւ երեւոյթներից, ինչպէս նաեւ ներքնապէս անքակտելի կերպով միացնել նրանց Աստծու հետ: Ըստ նրա, անհրաժեշտ չէ ուխտագնացութիւններ կատարել դէպի Երուսաղէմ կամ այլ սրբազան վայրեր՝ գտնելու համար Աստծուն, քանզի Աստուած ներկայ է մեր առօրեայ կեանքի ողջ ընթացքում: Այս առթիւ Էկհարտը խորհուրդ է տալիս ճանաչել Աստծուն մարդկային կեանքում դրսեւորւող իւրաքանչիւր մասնիկի կամ երեւոյթի մէջ, լինի դա թէկուզ տառապանք, դժբախտութիւն, թշուառութիւն

կամ ուրախութիւն, որոնք, իրականում, մեզ մղում են պարզապէս դէպի հոգեւոր բարեպաշտութիւն:

Ինչ վերաբերում է նրա քարոզներին, Էկհարտը զարգացնում է այն միտքը, թէ Քրիստոսի արտասանած իւրաքանչիւր խօսքն անգամ ունի իր խոր իմաստը, որը պիտի հասկանալ ոչ թէ ալլաբանական կամ բարոյական իմաստներով, այլ պէտք է կեանքի կոչել այն եւ խորհրդածութեան առարկայ դարձնել:

Իր քարոզներում Էկհարտը խուսափում է հռետորական պաճուճանքներից. նա պարզապէս շեշտը դնում է այն բանի վրայ, թէ Աստուած ինքն իրեն արտայայտում է իր խօսքի մէջ: Այդ խօսքը իբրեւ «Բանն Աստուծոյ» յաւիտեանապէս ծնւում է: Իսկ այնտեղ, ուր այդ խօսքը չի ծնւում, այնտեղից բացակայում է Աստուած:

1325 թ. Վենետիկում, Կաթողիկ եկեղեցու կողմից գումարուած մի ժողով փորձ է անում լուծութեան մատնել գերմանացի մի շարք հոչակաւոր քարոզիչների, որոնց թւում նաեւ՝ Մայեստեր Էկհարտին: Վերջինս մերժում է իր դէմ յարուցուած մեղադրանքները եւ ներկայանում Ավինիոն քաղաքում Կաթողիկ եկեղեցու հաւատաքննիչներին ու դիմում ինքնապաշտպանութեան: Չնայած այն բանի, որ նշանակուած էր մի յանձնախումբ քննարկելու Էկհարտի բոլոր գրութիւնները եւ Յովհաննէս ԻԲ պապը նոյնիսկ անձամբ ուսումնասիրել էր դրանք, այդուհանդերձ ոչ ոք չի համարձակուած դատապարտման վճիռ արձակել նրա դէմ: Նրա մահից մէկ տարի յետոյ միայն, 1329 թ., պապը դատապարտում է ոչ թէ Էկհարտի քարոզածը, այլ պարզապէս նրա մի քանի եզրայանգումները: Դրանից յետոյ, դարեր շարունակ, մոռացութեան է մատնւում Էկհարտի անձն ու գործը:

Նոր միայն, 19րդ դարի սկզբին, գերմանացի հանրայայտ փիլիսոփայ՝ Հեգելը (1770–1831), յայտնաբերում է Էկհարտի գործերը եւ մեծապէս խանդավառում նրանցով: Նա նոյնիսկ հաստատում է, թէ ինքն իր փիլիսոփայական ողջ մտածելակերպը պարտական է Էկհարտին: Մօտաւորապէս միեւնոյն միտքն է արտայայտում նաեւ գերմանացի մի այլ հոչակաւոր փիլիսոփայ՝ Արթուր Շոփէնհաուէրը (1788–1860):

Էկհարտը հիմնականում մեղադրւում է պանթէիզմի (համաստուածութիւն) մէջ, որ նոյնացնում է Աստուծոն բնութեան կամ տիեզերքի հետ, այսինքն՝ ժխտում է անձնաւորեալ Աստծու գերբնական գոյութիւնը: Էկհարտի պարագայում այդ մեղադրանքը միայն մասամբ ճիշտ է. նրա պանթէիզմը ամբողջութեամբ կրօնամիտտիկական է եւ անմիջական որեւէ կապ չունի սոոյիկեան կամ նորալատոնական առումով դրսեւորւող պանթէիզմի հետ:

Դժբախտաբար դեռ շատերին անձանօթ է Մայեստեր Էկհարտի բացառիկ եւ բարձրարժէք վաստակը փիլիսոփայութեան եւ հոգեւոր գիտութեան բնագաւառներում: Նրա մտքերն ընդհանուր առմամբ հոյակապ են եւ գերմայիչ: Այստեղ մեր նպատակն է, կենսագրական այս շատ ամփոփ տեղեկութիւններից յետոյ, թարգմանաբար կատարուած հատուածներով, մի համեստ գաղափար տալ հայ ընթերցողին նրա գործերի մասին:

ԲԱՐԻ ԱՌԱՒՕՏ

Մայեստեր էկհարտը մի օր ասաց մի աղքատ մարդու.

- Աստուած քեզ մի բարի առաւօտ շնորհի, եղբա՛յր:
- Տէ՛ր, այդ մաղթանքը դու քեզ համար պահիր, որովհետեւ ես դեռեւս ոչ մի վատ առաւօտ չեմ ունեցել, - պատասխանեց մարդը:
- Իսկ ինչպէ՞ս կարող է դա պատահել:
- Որովհետեւ այն բոլորը, որ Աստուած ինձ իբրեւ տառապանք է տալիս, ես Նրա սիրոյն համար կրում եմ ուրախութեամբ, ինձ այդպիսի մի պատուի համար անարժան եմ համարում, եւ այդ պատճառով էլ ես ինձ երբեք տխուր կամ տրտում չեմ զգում:

* * *

էկհարտը հարցնում է.

- Առաջին անգամ ե՞րբ գտար Աստծուն:
- Հէնց այն րոպէին, երբ ես հրաժարուեցի իմ բոլոր կրքերից:
- Իսկ ո՞ւր թողեցիր Աստծուն:
- Աստծուն թողեցի մաքուր եւ ջինջ սրտերի մէջ:

* * *

էկհարտը հարցնում է.

- Ի՞նչ տեսակ մարդ ես դու, եղբա՛յր:
- Ես մի թագաւոր եմ:
- Որտե՞ղ ես թագաւորում:
- Ես թագաւորում եմ իմ մարմնի վրայ, որովհետեւ այն, ինչ որ իմ հոգին ձգտում է ստանալ Աստծուց, իմ մարմինը աւելի արագ է շարժւում խանգարելու համար այդ ձգտումը:

* * *

էկհարտը հարցնում է.

- Ամէն մի թագաւոր պէտք է անպայման մի թագաւորութիւն ունենայ, իսկ որտե՞ղ է քո թագաւորութիւնը:
- Իմ թագաւորութիւնը իմ հոգու մէջ է: Երբ ես փակում եմ իմ զգայարանների դարպասները եւ ամենայն լրջութեամբ տենչում Աստծուն, այն ժամանակ ես գտնում եմ Նրան իմ հոգու մէջ այնպէս լուսաւոր եւ այնպէս բերկրալի, ինչպէս որ Նա գոյութիւն ունի յաւիտենական կեանքում:

* * *

էկհարտը հարցնում է.

- Դու ուրեմն մի սուրբ ես, ո՞վ քեզ սրբացրեց, եղբա՛յր:
- Այդ բանն արեց լուութեան մէջ իմ կեցութիւնը, իմ անդրանցական

խորհրդածուլթիւնը եւ իմ միաւորումը Աստու հետ: Սրանք ինձ վեր բարձրացրին դէպի երկինք, քանզի ես չկարողացայ ոչ մի տեղ հանգիստ գտնել, բացի Աստույ մօտից: Այժմ ես գտել եմ Նրան եւ Նրանում գտել եմ նաեւ յաւիտենական հանգիստն ու խաղաղութիւնը, եւ դրանք ժամանակազրային առումով զլուծածանցնում են աշխարհի բոլոր թագաւորութիւնները:

ՅԱՂԹԵԼ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

«Սրբերը հաւատով պարտութեան մատնեցին թագաւորութիւններ»: (Երբ. ԺԱ 33):

Սրբերը պարտութեան են մատնել չորս թագաւորութիւններ, եւ մենք էլ պէտք է գիտենանք յաղթել թագաւորութիւններին: Առաջին թագաւորութիւնը աշխարհն է. աշխարհին պէտք է յաղթել հոգու ազքատութեամբ: Երկրորդ թագաւորութիւնը մեր մարմինն է. նրան պէտք է յաղթել քաղցով եւ ծառաւով: Երրորդ թագաւորութիւնը սատանայինն է. նրան պէտք է յաղթել տառապանքներով եւ յամառ ջանքերով: Չորրորդ թագաւորութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսինն է. այն պէտք է գրաւել ուժով եւ սիրով:

Եթէ մարդ ամբողջ աշխարհի տէրն էլ լինի, նոյնիսկ այդ դէպքում պէտք է իրեն աղքատ համարի, չգաղարի իր ձեռքը երկարելուց դէպի մեր Տէր Աստու դարպասը եւ նրանից խնդրի որպէս ողորմութիւն աստուածային շնորհը, քանզի այդ շնորհն է, որ մարդ արարածին դարձնում է Աստույ Որդի: Դրա համար էլ Դաւիթ մարգարէն ասում է. «Տէ՛ր, իմ ամբողջ փափաքը քո առաջ է, որ ձգտում է դէպի քեզ»: Պօղոս առաքեալն ասում է. «Ես ամէն ինչ նկատի ունեմ իբրեւ պղծութիւն, պարզապէս սիրաշահելու համար Յիսուս Քրիստոսին»: Անկարելի է, որ գոյութիւն ունենայ մէկ հոգի առանց մեղքի, բացի այն դէպքից, երբ Աստույ շնորհը հանգչում է նրա վրայ:

Շնորհի տէրը նա է, որ աշխուժացնում է մարդու հոգին եւ տրամադրում նրան կատարելու աստուածային գործողութիւններ, քանզի շնորհը բխում է աստուածային ակունքից, այն նմանութիւնն է աստուածայինին, ունի աստուածային քաղցրութիւն եւ փոխակերպում է մարդկանց հոգին՝ նմանեցնելով այն Աստու:

Երբ այդ միեւնոյն շնորհը, այդ միեւնոյն քաղցրութիւնը ազդում է մարդու կամքի վրայ, այդ ժամանակ այն հանդէս է գալիս իբրեւ սէր: Երբ այդ միեւնոյն շնորհը ընկնում է մարդու մտաւոր կարողութեան վրայ՝ այն ժամանակ դա դառնում է յոյս եւ հաւատ: Երբ այդ միեւնոյն շնորհը ողորդում է մարդու ցասումնական կիրքը՝ վերածում է դրան վերամբարձ գորութեան եւ դառնում մի յոյս: Այս բոլորը կոչւում են աստուածային առաքինութիւններ, որովհետեւ առաջացնում են տարբեր աստուածային կարողութիւններ մարդկային հոգում, այնպէս, ինչպէս արեւի գորութիւնը, որ առաջացնում է կեանք բնու-

թեան մէջ: Եթէ լոյսը չբանայ, ապա ամէն ինչ կը կորչի այնպէս՝ ինչպէս ոչինչ գոյութիւն չի ունեցել երբեք: Նոյնը պատահում է նաեւ հոգու հետ. երբ շնորհը եւ սէրը հաստատուած են մարդու հոգում, հեշտ է կատարել աստուածային գործեր: Երբ մի մարդու համար դժուար է լինում կատարել աստուածային գործերը, ամենայն վստահութեամբ դա նշանակում է, որ նրա մօտ շնորհ գոյութիւն չունի: Հէնց դրա համար էլ վարդապետներից մէկն ասել է. «Ես չեմ դատապարտի այն մարդուն, որ ճոխ զգեստներ է հագնում եւ համեղ ճաշերի է ձգտում, եթէ նա սէր ունի: Մինչդեռ այն մարդը, որ անհամբեր է եւ դիւրբորբոք, ինչպէս նաեւ չի փորձում բարելաւել իր կեցութիւնը, եթէ նոյնիսկ մեծ գործեր անի, շատ աղօթի, պաս պահի եւ առանձնանայ, դա նրա հոգուն ոչնչով չի օգնի»: Այսպիսով պէտք է ձեւեր գտնել պարտութեան մատնելու թագաւորութիւններին:

(շար.)

Ուսումնասիրեց եւ քարգմանեց՝
Յակոբ Ա.րբ. Գլնեան



L'Église Apostolique Arménienne de Suisse — Saint Hagop de Troinex, Genève